Ազգ

AZG
armenian newspaper

Յուլիս 23
1992
Հինգշաբթի

երկօրեայ թերթ
Բ տարի, թիւ 62 (154)
գինը 2 ռ.

Երեւան 375010
Հանրապետութեան 47

դասիչ 69149

հեռ. 581841, ֆաքս 562941, տելեքս 243266 CPIRI SU

Հանրապետական Գրադարան
Гос. Библиотека
ՀԱՍՀ-Арм.ССР
Պետական գրադարան

Խփվել է ադրբեջանական Սу-25-ը

Ստեփանակերտի իրազեկ աղբյուրները հայտնում են, որ երեքշաբթի երեկոյան խփվել է ադրբեջանական Սу-25 գրոհային ինքնաթիռը, որը ռմբակոծում էր Մարտակերտի շրջանի Չլդրան գյուղը: Ինքնաթիռն ընկել է մերձակա անտառը եւ ոչնչել: Օդաչուին հաջողվել է դուրս ցատկել: Պատահարի վայրից ոչ հեռու գտնվել է նրա պարաշյուտը, փնտրվում է խփված ինքնաթիռը: Նույն աղբյուրները հաղորդում են նաեւ, որ Մաղավուզ գյուղի գնդակոծության ժամանակ խփվել է ադրբեջանական ռազմական ուղղաթիռ: ■

Թշնամին տիրացել է Մաղավուզին

Ստեփանակերտ. Հուլիսի 21-ի երեկոյան ադրբեջանական բանակը հարձակում է ձեռնարկել Մարտակերտի շրջանի վերջերս ազատագրված Մեծշեն եւ Մաղավուզ գյուղերի վրա: Կատաղի մարտերից հետո նրանց հաջողվել է տիրանալ Մաղավուզին: Հայկական կողմից զոհվել են վեց հոգի: Եւս յոթ հայեր զոհվել են Մեծշեն գյուղի համար մղվող մարտերի ընթացքում: Այնուամենայնիվ, գյուղը մնում է հայկական ուժերի հսկողության տակ: Ադրբեջանական բանակը մեծ կորուստներ է կրել: ■

Համաձայնագիր ստորագրվեց Մոսկվայի եւ Հայաստանի միջեւ

Մոսկվա, 22 հուլիս, մեր սեփական թղթակից ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Ռուսաստանի, նրա մայրաքաղաք Մոսկվայի եւ Հայաստանի միջեւ միշտ էլ գոյություն են ունեցել տնտեսական ու մշակութային սերտ կապեր, եւ մեր խնդիրն է տնտեսական ու քաղաքական նոր իրադրության պայմաններում վերականգնել ու զարգացնել այդ հարաբերությունները՝ ի շահ երկու ժողովուրդների, հայտարարեց Մոսկվայի վարչապետի տեղակալ Իոսիֆ Օրջոնիկիձեն Մոսկվայի եւ Հայաստանի կառավարությունների միջեւ առեւտրատնտեսական, գիտատեխնիկական եւ մշակութային համագործակցության համաձայնագիրն ստորագրելիս:

Համաձայնագիրը, որը քաղաքապետարանի Սպիտակ սրահում ստորագրեցին Ի. Օրջոնիկիձեն եւ Մոսկվայում Հայաստանի կառավարության մշտական ներկայացուցիչ Ֆելիքս Մամիկոնյանը, առայժմ նախատեսված է 1992 թվականի համար եւ կարող է լավ հիմք ծառայել հետագա տարիների համար:

Փաստաթուղթն ընդգրկում է երեք հիմնահարց. վերականգնել տնտեսական կապերը, որոնք, ինչպես նշեց Օրջոնիկիձեն, ամբողջապես չեն խզվել բացառապես ձեռներեց մարդկանց շնորհիվ, գիտատեխնիկական համագործակցության համակարգում եւ ընդլայնում, մշակութային մերձեցում:

Համաձայնագիր կնքելն, անշուշտ, հանդիսավոր ու հաճելի արարողություն է, բայց կողմերը հիանալի են պատկերացնում դրա իրագործման դժվարությունները: Եւ «Ազգ»ի թղթակցի այն հարցին, թե Մոսկվան կօգնի՞ Հայաստանին տրանսպորտով ու վառելանյութով, Օրջոնիկիձեն պատասխանեց շատ հակիրճ՝ մեր իրավասության սահմաններում: Իսկ մեր մյուս հարցին, թե Մոսկվան չի՞ պատրաստվում Հայաստանի կամ մայրաքաղաքի հայ համայնքի միջոցով օգտագործել սփյուռքի հայության միջոցները, փոխվարչապետն ասաց. *«Մոսկվայում ու արտասահմանում արդեն հանդիպումներ եմ ունեցել հայ բիզնեսմենների հետ, բայց կոնկրետ առաջարկություններ չեն եղել: Եթե այդպիսիք լինեն, մենք անպայման կընդառաջենք նրանց: Ինչ վերաբերում է Մոսկվայի հայ համայնքին, մենք այն համարում ենք կայունության գործոն»:* ■

ԱՐԾՎԱՇԵՆՈՒՄ ՅՈԹ ԽԱՂԱՂ ԲՆԱԿԻՉՆԵՐ ԱՎԱՋԱԿԱՅԻՆ ՀԱՐՁԱԿՄԱՆ ՋՈՀ ԵՆ ԴԱՐՁԵԼ

Հայաստանի պաշտպանության նախարարության լրատվական կենտրոնը հայտնում է, որ հուլիսի 21-ի կեսօրին ավտոմատներով զինված թաք ավազակներ Արծվաշեն-Կրասնոսելսկ ճանապարհի 10-րդ կիլոմետրում կանգնեցրել են «Մոսկվիչ» մակնիշի մեքենան, սպանել վարորդին, ծանր վիրավորել, իսկ հետո վրան բենզին լցնելով այրել Շաղիկո Չոբանյանին: Երեք ուղեւորուհիները, այդ թվում նաեւ Չոբանյանի կինը, դուրս են թռվել մեքենայից եւ տղամարդկանց աչքի առաջ բռնաբարվելուց հետո սպանվել: Սպանել են նաեւ Չոբանյանի երեք երեխաներին՝ դպրոցահասակ տղային եւ աղջկան, ինչպես նաեւ նորածին մանկանը: Ինքը՝ Շաղիկո Չոբանյանը ծանր վիճակում տեղափոխվել է Կրասնոսելսկի հիվանդանոց:

Տարբ. Երեկ եւ նախորդ օրը իրավիճակը շրջանում կտրուկ սրվել է: Հուլիսի 21-ին տանկերից, հրանոթից եւ «Գրադ» կայանքներից հրետակոծվել են շրջանի սահմանամերձ Պառավախար եւ Վարագավան գյուղերը: Կան մեծ ավերածություններ: Պառավախարում երեք հոգի վիրավորվել են: Երեկվա ընթացքում սահմանամերձ բոլոր գյուղերը գնդակոծվել են Ադրբեջանի Թռուզի եւ Ղազախի շրջաններում տեղակայված կրակակետերից:

Եղեգնաձոր. Իրավիճակն ընդհանուր առմամբ հանգիստ է: Այնուամենայնիվ, վերջին օրերի ընթացքում Նախիջեւանի հանրապետության տարածքից փոքր տրամաչափի զինատեսակներով գնդակոծվում էր Խաչիկ գյուղը, որի հետեւանքով հուլիսի 21-ին ծանր վիրավորվել է դաշտում աշխատողներից մեկը: Երեկվա ընթացքում միջադեպեր չեն եղել:

Սիսիան. Իրավիճակը համեմատաբար հանգիստ է: Երեկվա ընթացքում Նախիջեւանի տարածքից հատկենտ կրակոցներ են հնչել միայն Շաղաթ գյուղի ուղղությամբ: Տուժածներ չկան: ■

Հայաստանն ու Ադրբեջանը հակասական տեղեկություններ են տալիս

Ինչպես հաղորդում է Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը, հանրապետության զինված ուժերը, չնայած հակառակորդի ուժերի գերակշռությանը, կարողացել են կասեցնել հայկական կազմավորումների հարձակումը Լեռնային Ղարաբաղի հյուսիսում: Ավելին, նախարարության տվյալներով, հակահարձակման շնորհիվ ադրբեջանցիներն «ազատագրել են» Կուսապատ, Մեծշեն, Հոռաթաղ, Մոխրաթաղ եւ Դամիրլու գյուղերը: Հայտնվում է, որ ադրբեջանական ուժերը վերականգնել են հսկողությունը Սարսանգի ջրամբարի ամբարտակի վրա: Խփվել է հայկական երկու T-72 տանկ եւ երեք հետեւակի մարտական մեքենա:

Միաժամանակ հայկական կողմը հերքում է Բաքվի տված այն տեղեկությունները, թե ադրբեջանական ուժերը հակահարձակման են անցել եւ զբաղեցրել նախկին դիրքերը: Ղարաբաղի «Նորություններ» գործակալությունը հայտնում է, որ հայկական ուժերի առաջխաղացումը շարունակվում է: Ըստ նույն գործակալության, հայկական ինքնաշաղ ռազմական ուժերն իրենց հսկողության տակ են պահում վերջին օրերի ընթացքում ազատագրած գյուղերը:

Ըստ նախնական տվյալների, ադրբեջանական կողմից կան մոտ 30 սպանվածներ: Խփվել է ադրբեջանական բանակի 6 միավոր զրահատեխնիկա, այդ թվում տանկեր:

Ինչպես երեւում է, Ադրբեջանը փորձում է կեղծ լուրերի տարածման միջոցով իր ժողովրդի աչքում արդարացնել վերջին շրջանի պարտությունները՝ մի կողմից բացատրելով դրանք որպես Հայաստանի կողմից լայնածավալ ռազմական օգնության հետեւանք, մյուս կողմից ընդհանրապես հերքելով այդ պարտությունները: ■

Յիցխակ Ռաբինը Կահիրեում Ջեյմս Բեյքերը Սիրիայում

Արաբ-իսրայելյան խաղաղության ջանքերը թափ են հավաքում

Չորեքշաբթի օրը Կահիրեում վերջ գտավ եգիպտոս-Իսրայել գագաթաժողովը, որն ընդհատվել էր վեց տարուց ի վեր: Վարչապետ Յիցխակ Ռաբինի այցը Կահիրե, հանդիպումները նախագահ Հոսնի Մուբարաքի հետ եւ վերջինիս կողմից Իսրայել այցելելու հրավերի ընդունումը հույս են ներշնչում, որ արաբ-իսրայելյան խաղաղության ջանքերը կարող են հաջողության հասնել: Թեեւ նախագահ Մուբարաքի փոխադարձ այցի թվականը դեռեւս չի ճշտվել, սակայն կայանալու դեպքում այն կլինի առաջինը 1981-ից ի վեր, երբ Մուբարաքը նախագահ դարձավ:

Այս կողմից, երեկ շարունակվեց Մ. Նահանգների պետքարտուղար Ջեյմս Բեյքերի շրջագայությունը Միջին Արեւելքի երկրներում: Իսրայել կատարած այցից հետո, որտեղ նա հանդիպել էր նաեւ Պաղեստինի ներկայացուցիչների, որոնք այնքան էլ խստապահանջ չէին գտնվել, պետքարտուղարը չորեքշաբթի օրը հանդիպեց Ամմանում, որտեղ ժողով ունեցավ Հուսեյն թագավորի հետ: Իսկ երեկ առավոտյան, անակնկալ կերպով դեպի Կահիրե թռչելուց հետո, օրվա վերջում այցելեց Դամասկոս եւ ընդունվեց նախագահ Հաֆեզ Ասադի կողմից: Այդ հանդիպումը կայանալու էր նախորդ օրը, սակայն Սիրիայի նախագահի մոր մահը պատճառ դարձավ հետաձգվելուն: Դամասկոսի օդանավակայանում Բեյքերը լրագրողներին հայտնեց, թե ինքը շատ գոհ է գրավյալ հողերի վրա նոր բնակավայրեր չստեղծելու մասին Թել-Ավիվի տված հավաստիացումների առիթով: ■

Թուրքիայի վարչապետը հրավիրել է Հայաստանի նախագահին

Այս մասին երեկ կայացած բրիֆինգում հայտարարեց Հայաստանի նախագահի մամուլի քարտուղար Ռ. Շուգարյանը: Նա նշեց, որ Դեմիրելի հրավերը վերաբերում է հուլիսի 24–26-ը Եփրատ գետի վրա կառուցված ջրամբարի բացման հանդիսավոր արարողությանը, որին հրավիրված են 45 երկրների ղեկավարներ:

Դա Եփրատի վրա կառուցված 3-րդ խոշոր ջրամբարն է, որը հնարավորություն կտա ոռոգել 10 հազար քմ հողատարածք:

Այս համակարգի գործարկումը կարեւոր նշանակություն կունենա ոչ միայն Թուրքիայի, այլեւ ողջ շրջանի համար: *«Թե Հայաստանի ղեկավարությունից ով կմասնակցի այդ արարողությանը, առայժմ որոշված չէ»,* ասաց պրն. Շուգարյանը: Նա անդրադարձավ նաեւ Լեռնային Ղարաբաղի հանրապետության Գերագույն խորհրդի պատվիրակության այցին, նշելով, որ օրվա ընթացքում ԼՂՀ ԳԽ նախագահի պատասխանատու Գեորգի Պետրոսյանը քաղաքական խորհրդակցություններ է անցկացրել նախագահի խորհրդականների հետ, կհանդիպի նաեւ Լ. Տեր-Պետրոսյանի հետ: Նա ավելացրեց նաեւ, որ Հայաստանի եւ Արցախի ղեկավարների միջեւ լուրջ տարաձայնություններ չկան, հարաբերությունները նորմալ են, իսկ անհամաձայնությունները եղել են միջազգային հարցերում, հատկապես ԵԱՀԽ-ի մասնակցության հարցում: Նույն օրը Գերագույն խորհրդում տեղի ունեցավ Հայաստանի եւ ԼՂՀ խորհրդարանների նախագահությունների համատեղ նիստ: Հ.Ա.

Խորվաթիա-Բոսնիա զինվորական դաշինք

Խորվաթիայի եւ Բոսնիա-Հերցեգովինայի միջեւ հավանական է նոր դաշինքի կնքում, որով նախատեսվում է զինվորական ճակատ կազմել ընդդեմ սերբերի, որոնք նախահարձակ հարվածների տակ են գտնվում ներկայիս Բոսնիա հյուսիսային շրջանների մեծ մասը, նեռայալ մայրաքաղաք Սարաեւոն, որտեղ կռիվները երեկ շարունակվեցին, թեեւ նվազ սաստկությամբ: Հարավսլավիայի այդ երկու հանրապետությունները նման մտքի հանգեցին երեկ առավոտ Զագրեբում իրենց ղեկավարների միջեւ կայացած հանդիպումից հետո: Ավելորդ չէ նշել, որ Խորվաթիան գրավել է բոսնիական զգալի տարածքներ, բայց մտավախություն ունի, որ վերջինիս հավելհարդարը տեսնելուց հետո սերբերը կշարունակեն հարձակվել նաեւ իր վրա, ինչպես մի քանի ամիս առաջ: ■

Դեմքը տեղի է ունեցել կենցաղային հողի վրա

Երեւանում հուլիսի 20-ին պատահած ողբերգությունը տեղի է ունեցել կենցաղային հողի վրա, երեկ «Սնարքի» թղթակցին հայտնեց Հայաստանի նախագահի մամուլի քարտուղար Ռոբերտ Շուգարյանը: Նա ժխտեց ռուսական լրատվական միջոցների տեղեկությունները այն մասին, թե հայերը հարձակվել են զինծառայողների վրա զենք խլելու նպատակով: Միաժամանակ Շուգարյանը հայտնեց, թե Հայաստանի ՆԳՆ աշխատակիցները ամեն ինչ արել են մեղավորներին բռնելու համար: Նրանք ձերբակալել են նաեւ 7-րդ բանակի մի քանի զինծառայողների, որոնք զենք են վաճառել քաղաքացիներին: ■

«Չինաստանի դեսպանատան բացումը կախված է իմ հայ գործընկերներից»,

ասում է Հայաստանում Չինաստանի գործերի ժամանակավոր հավատարմատարը

Երեկ Հայաստանում Չինաստանի ժողովրդական Հանրապետության գործերի ժամանակավոր հավատարմատար Չժան Յանյանը Հայաստանի արտգործնախարար Ռաֆֆի Հովհաննիսյանին հանձնեց Չինաստանի արտգործնախարար Ցյան Ցիչենի ուղերձը, ըստ որի նա ստանձնում է հավատարմատարի պարտականությունները: Պրն. Յանյանը երկար տարիներ աշխատել է Չինաստանի արտգործնախարարության Արեւելյան եւրոպայի սոցիալիստական երկրների բաժնում որպես վարիչի տեղակալ, այնուհետեւ եղել է Մոսկվայում Չինաստանի դեսպանատան առաջին քարտուղար: Պատասխանական հանդիպումից հետո մենք դիմեցինք պրն. Յանյանին:

– Հայ եւ չին ժողովուրդների բարեկամությունը դարավոր պատմություն ունի: Դեռ հայ պատմիչների երկերից ու մեզ հասած ավանդություններից հայտնի է, թե ինչպիսի սերտ կապերի մեջ են եղել հայ վաճառականները չինական հարուստ շուկաների հետ: Այնուհետեւ երկար դարեր այդ կապը խզվեց եւ հիմա աշխարհի ամենախոշոր պետություններից մեկը՝ Չինաստանը, Անդրկովկասում առաջինը Հայաստանում է նշանակել իր ժամանակավոր հավատարմատարին: Ինչո՞վ էր պայմանավորված այդ ընտրությունը:

– Չինաստանի ժողովրդական Հանրապետությունը վարում է խաղաղ, բարեկամական եւ անկախ արտաքին քաղաքականություն: Մենք ձգտում ենք ակտիվ հարաբերություններ զարգացնել աշխարհի բոլոր պետությունների հետ: Հայաստանի ընտրության հարցն այնքան էլ պատահական չէր, որովհետեւ այդ խընդրում մեծ նշանակություն ունեցան ոչ միայն մեր հայ գործընկերների բարեհամբույր վերաբերմունքը, այլեւ Հայաստանի փոխնախագահ, վարչապետ Գագիկ Հարությունյանի վերջերս Չինաստան կատարած այցը:

Ինչ վերաբերում է Անդրկովկասի մյուս հանրապետություններին, ապա նրանց հետ նույնպես ասիճանաբար դիվանագիտական հարաբերություններ կհաստատենք:

– Ո՞րն է ձեր առաքելության հիմնական նպատակը եւ ե՞րբ եք նախատեսում Երեւանում դեսպանատուն բացել:

– Նախ ասեմ, որ Հայաստանում դիվանագիտական ծառայության անցնելու նշանակումը ես մեծ ուրախությամբ ընդունեցի, որովհետեւ արդեն որոշակի պատկերացում ունեի հայ ժողովրդի եւ Հայաստանի մասին: Համոզված եմ, որ իմ հայ գործընկերների, ինչպես նաեւ Հայաստանի կառավարության օգնությամբ եւ աջակցությամբ հաջողությամբ կկատարեմ պարտականություններս: Այժմ ես հնարավորին չափ շուտ պետք է նախապատրաստեմ մեր դեսպանի այցը: Իհարկե, ինձ հայտնի չէ, թե ով կլինի դեսպան, բայց որքան շուտ լինի, այնքան լավ: Իսկ դեսպանատունը ես կարող եմ վաղն էլ բացել, եթե արտգործնախարարության իմ հայ գործընկերները մեզ տրամադրեն ծառայողական եւ բնակելի շենքեր:

– Փաստորեն դուք պետք է կյանքի կոչեք Պեկինում ստորագրված համատեղ հայտարարության որոշ կետեր: Ձեր գնահատմամբ, այդ հայտարարությունն ի՞նչ կտա մեր երկու ժողովուրդներին:

– Նախ, իմ կարծիքով, այդ հայտարարությունը մեր հարաբերությունների սկզբունքային հիմքն է: Բայց որպեսզի կյանքի կոչվեն այդ հարաբերությունները, պետք է կոնկրետ քայլեր ձեռնարկվեն: Մենք արդեն հայտարարել ենք, որ աջակցում ենք Հայաստանին անկախ պետականության զարգացման եւ հանրապետության ժողովրդական տնտեսության զարգացման հարցում: Չինաստանը շահագրգռված է զարգացնել մեր երկու ժողովուրդների եւ երկրների միջեւ եղած բարեկամությունն ու համագործակցությունը:

ՀԱԿՈԲ ԱՍԱՏՐՅԱՆ

digitised by A.R.A.R.@

Առաջնահերթը Հայաստանի եւ Արցախի միջեւ հարաբերությունների հստակեցումն է

ՀՀ ԳԽ պատգամավորական խումբը վերադարձավ Արցախից

Ինչպես հայտնել էինք, հուլիսի 10-ին Արցախ էր մեկնել Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի պատգամավորներից կազմված մի խումբ Պետրոս Քաջախյանի գլխավորությամբ: Ըստ նախնական տեղեկությունների, խումբը պետք է զբաղվեր Հայաստանի կողմից Արցախին տրամադրվող մարդասիրական օգնության համակարգմամբ: Հուլիսի 20-ին խումբը վերադարձավ Երեւան: Պրն. Քաջախյանին խնդրեցինք ներկայացնել ընդհանուր տպավորություններն ու կատարված աշխատանքները:

«Նախ ասեմ, որ մեր խմբի նպատակն իրավիճակին ծանոթանալն էր եւ իրադրության կայունացմանը նպաստող գործողությունների վերաբերյալ Հայաստանի Գերագույն խորհրդին առաջարկություններ ներկայացնելը: Հանդիպումներ ունեցանք ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահության անդամների, կառավարության ներկայացուցիչների, ՀՅԴ-ի, հատուկ ծրագրերի պետական վարչության արցախյան ներկայացուցչության, Գերագույն խորհրդի լրատվական կենտրոնի աշխատակիցների հետ: Հանդիպումներ ունեցանք նաեւ բազմաթիվ գյուղերի ղեկավարների հետ, եւ այդպիսով ձեւավորվեց ընդհանուր պատկերը:

Արցախում այսօր հիմնական խնդիրն իշխանության կառույցների վերանայումն է եւ կառուցվածքային փոփոխությունների անհրաժեշտությունը: Ստեփանակերտում եւ համեմատաբար աղահով գյուղերում մեծ թվով փախստականներ կան, սննդամթերքի խիստ պակաս կա, անհրաժեշտ է լայնածավալ բուժօգնություն, համաձարակի լուրջ վտանգ կա եւ այլն: Այսօր, երբ Արցախը պատերազմի մեջ է եւ նրա տարածքների մի զգալի մասը գտնվում է թշնամու ձեռքին, փաստորեն իշխանության կառույցները չեն համաղատասխանում ստեղծված իրավիճակին: Արցախում այսօր իշխանության երեք օղակներ կան՝ ԼՂՀ Գերագույն խորհուրդը, կառավարությունը եւ ռազմական ղեկավարությունը: Կա նաեւ հատուկ ծրագրերի պետական վարչության ներկայացուցչությունն Արցախում, որը սերտ համագործակցության մեջ է հատկապես ռազմական ղեկավարության հետ: Սա որոշակի առումով կառավարություն է կառավարության ներսում:

Այսօր, իմ կարծիքով, առաջնահերթը Հայաստանի եւ Արցախի միջեւ հարաբերությունների հստակեցման հարցն է: Ինչպիսի՞ն կլինեն այդ հարաբերությունները, ի՞նչ հարթության վրա կկառուցվեն: ԼՂՀ Գերագույն խորհրդի տեսակետն այն է, որ Հայաստանն Արցախին վերաբերող բոլոր հայերը պետք է հանդիսանան Արցախի իշխանությունների հետ: Վերջին հաշվով հարցն այն է, թե ո՞վ պետք է մյուսին թելադրի իր հաղթականությունը. Հայաստա՞նը, թե Արցախը: Թե՞ պետք է պարզապես փոխհամագործակցել: Բայց անկախ այս հարցերից, պետք է վերակառուցվի ԼՂՀ կառավարման համակարգը, որովհետեւ, նորից եմ կրկնում, պատերազմող հանրապետությունը փաստորեն չունի համապատասխան կառավարման համակարգ: Իշխանությունը պետք է ավելի կենտրոնացված լինի: Չի բացառվում նաեւ անձնավորված իշխանությունը: Խոսքն այստեղ նախագահական համակարգի մասին չէ, որովհետեւ այսօր Արցախում հնարավոր չէ նախագահական ընտրություններ անցկացնել կամ նստաշրջան հրավիրել: Պարզապես պետք է Գերագույն խորհրդի նախագահության որոշմամբ ստեղծել մի մարմին, որն օժտված կլինի բավականին մեծ լիազորություններով: Այդ դեպքում արդեն Հայաստանի համար նույնպես ավելի հեշտ կլինի ձեւել իր հարաբերությունները Արցախի հետ: Այդ մարմինն, ըստ իս, պետք է ստեղծվի ոչ թե ընտրությունների, այլ քաղաքական խորհրդակցությունների միջոցով: Եւ այն պետք է կարողանա վերկանգնել կուսակցական գաղափարներից:

Այսօր Արցախի իշխանությունների մեջ Հայաստանի նկատմամբ որոշակի սառնություն ու անվստահություն կա, թեեւ Հայաստանի Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջանում ԼՂՀ վերաբերյալ որոշումը մեղմել է այդ սառնությունը: Արցախի իշխանությունները դա դատճառաբանում են նրանով, որ իրենք չգիտեն, թե իրականում Հայաստանն Արցախի նկատմամբ ինչ դիրքորոշում ունի: Քաղաքական խորհրդակցությունների միջոցով պետք է հստակեցվեն այս հարցերը: Այսօր Արցախում չկա մի մարմին, որի ձեռքին կենտրոնացած լինեն իրական իշխանության լծակները: Իրական իշխանությունն ամենից շատ կենտրոնացված է պաշտպանության կոմիտեի ձեռքին, բայց միանշանակ ասել, թե ամբողջ իշխանությունը նրանն է, չի կարելի:

Փախստականների մասին: Վերջին շրջանում Արցախի իշխանություններին հաջողվել է Մարտակերտի շրջանի լքված գյուղերը վերադարձնել զգալի թվով բնակիչների՝ եթե ոչ բոլորին, գոնե տղամարդկանց: Փախստականների մի մասն արդեն ադրում է Շուշիում, որտեղ վերջերս սկսեց գործել հացի գործարանը, բայց այս հարցը շատ ավելի լուրջ եւ հետեւողական աշխատանք է պահանջում: Պետք է արգելել փախստականների հոսքն Արցախից: Ճիշտ է, ԼՂՀ Գերագույն խորհուրդը եւ Նախարարների խորհուրդը ՀՀ ԳԽ եւ կառավարության պատվիրակությունների ներկայությամբ այդպիսի որոշում էին կայացրել, բայց հենց միայն վերջերս Հայաստանում տեղի ունեցած ավտոբուսի վթարը (նրա մեջ էին գտնվում Մարտակերտի շրջանի Մաղավուզ գյուղի բազմաթիվ փախստականներ) ցույց տվեց, թե որքանով է իրականացվում այդ որոշումը: Վերջին հաշվով, մարտական գործողություններն ինքնանպատակ չեն, եւ դրանց հաջողության համար անհրաժեշտ է ամեն բիկանք: Արցախի տնտեսությունը ծայրաստիճան քայքայված է: Փաստորեն բերքահավաք չի կատարվում: Չկա գյուղատնտեսական տեխնիկա, վառելիք, աշխատուժ: Ստեփանակերտի բնակիչներին կտրոններով տրվող սննդամթերքը չընչին է: Սովի լուրջ վտանգ կա: Մտնավանդ, որ ստացվող մարդասիրական օգնությունը կենտրոնացված ձեւով չի բաշխվում: Բացի այդ, եթե անկեղծ լինենք, մարդիկ երկար ժամանակ չեն աշխատել, եւ դա խիստ անդրադառնում է աշխատանքային կարգապահության վրա: Մարդիկ երկար ժամանակ աշխատավարձ չեն ստացել: Արցախում ամբողջովին կազմալուծված է դրամական շրջանառությունը: Մի խոսքով, տնտեսության շտապիրք վերականգնման հեռանկարներն աղոտ են: Այսօր անասունների մնացածը մորթ է կատարվում, եւ վտանգ կա, որ հետագայում շատ դժվար է լինելու վերականգնել գլխաքանակը: Բացի այդ, Հայաստանում եւ Արցախում տնտեսական համակարգերի տարբերությունների հետեւանքով Արցախի տնտեսություններից պետական գույքն ու ունեցվածքը զարտուղի ճանապարհներով հասցվում են Հայաստան եւ վաճառվում:

Լրատվության հարցը նույնպես խիստ կարեւոր է: ԼՂՀ Գերագույն խորհրդի լրատվական կենտրոնի աշխատակիցների հետ կայացած հանդիպման ժամանակ պարզվեց, որ նրանք հստակ եւ ամբողջական լրատվություն չունեն: Միաժամանակ ռազմական ղեկավարությունը դժգոհում էր, որ համախ մամուլում (հատկապես՝ կուսակցական) հայտնվում են տեղեկություններ, որոնք ենթակա չեն հրապարակման: Բացի այդ, պետք է հստակ տարանջատել Արցախի համար տրվող լրատվությունը Հայաստանի եւ ամբողջ աշխարհի համար տրվող լրատվությունից: Փաստորեն Արցախ են հասնում հիմնականում «Երկիր» եւ «Ազատամարտ» թերթերը, որոնք ավելի շատ Հայաստանի ընթերցողի համար են: Հայաստանի իշխանությունների ճնշումներն Արցախում այլ կերպ են ընկալվում: Նույնը վերաբերում է նաեւ հեռատատեսկոմի հաղորդումներին: Նկատվել են Հայաստանում Արցախի վերաբերյալ տրվող լրատվության անճշտության դեպքեր: Այստեղ նույնպես լուրջ մոտեցում է պետք:

Մի խոսքով, մեր պատգամավորական խումբն առաջիկայում Արցախի իրավիճակի կայունացմանը նպաստող գործողությունների վերաբերյալ Գերագույն խորհրդի նախագահությանը կներկայացնի համապատասխան առաջարկություններ»:

Պատրաստեց
ԱՐՄԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԸ

Ո՞ւմ առաջ են նահանջում ադրբեջանցիները

Ադրբեջանի պաշտպանության նախարարության հաղորդագրությունների համաձայն, հուլիսի լույս 21-ի գիշերը, երկօրյա ծանր մարտերից հետո Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանում ադրբեջանական ուժերը նահանջել են թողնելով մինչ այդ իրենց կողմից նվաճված գյուղերը, այդ թվում նաեւ մարտավարական մեծ նշանակություն ունեցող Հաթերքը: Այժմ Մարտակերտի շրջանում ծանր մարտեր են ընթանում Մոխրաթաղ եւ Ումուդլու գյուղերի համար: Զոհերի եւ վիրավորների թիվը ճշտվում է:

Նախարարության տվյալների համաձայն, Ասրանցի ջրամբարը նույնպես անցել է հայկական ուժերի հսկողության տակ: Ադրբեջանի ինքնաաշտպանական ուժերին հաջողվել է մարտերի ընթացքում ոչնչացնել չորս T-72 տիպի տանկ եւ մեկ հետեւակի մարտական մեքենա: Նույն աղբյուրները հայտնում են նաեւ, որ Ասկերանի կողմից Հայաստանի գինված ուժերը հրթռռահրետանային կրակ են բացել Ադրբեջանի Աղդամի շրջանի գյուղերի ուղղությամբ: Կան վիրավորներ եւ ավերածություններ:

Դե ինչ, Ադրբեջանը վերջապես համարձակություն ունեցավ խոստովանել վերջին շրջանում իր կրած պարտությունները: Սնում է միայն զարմանալ, որ Ադրբեջանը ԼՂՀ ինքնաաշտպանական ուժերը շփոթում է Հայաստանի Հանրապետության գինված ուժերի հետ: Ի՞նչ է սա, հաղթական միտո՞ւմ, թե՞ վերջին շրջանի պարտությունները արդարացնելու փորձ: ■

Շրջափակումն իսկապե՞ս վնասակար է

Ամբողջովին կաթվածահար է եղել Նախիջեւանի եւ Ադրբեջանի միջեւ երկաթուղային, էներգետիկական ու հեռախոսային հաղորդակցությունների ցանցը, հաղորդում է «Ինտերֆաքս»-ը: Ըստ Բաքվի հաղորդագրությունների, դա Հայաստանի կողմից շարունակվող շրջափակման հետեւանքն է: Արդյունքում Նախիջեւանի արդյունաբերությունը եւ գյուղատնտեսությունը օրական կրում են ավելի քան 10 մլն ռուբլու վնաս:

Կարծում ենք, Ադրբեջանի համար ավելի հեշտ կլիներ հաշվել չորս տարի շարունակ Հայաստանի եւ Արցախի շրջափակման հետեւանքով Ադրբեջանի ձեռք բերածը: Դրա համար ամենեւին կարիք չկար հասնել Նախիջեւան: Հայաստանի համար առաքվող բեռների հազարավոր վագոններ այժմ էլ կանգնած են Բաքվի եւ Սումգայիթի երկաթուղային հանգույցներում: ■

Մեղավորը Մոսկվան է

Բաքու. Ադրբեջանի դատախազությունը, որը հետաքննում էր 1990 թ. հունվարյան իրադարձությունները, եկել է այն նախնական եզրակացությանը, որ «նախկին ԽՍՀՄ ղեկավարությունը արհեստականորեն հայ եւ ադրբեջանցի ժողովուրդների միջեւ հակամարտություն է ստեղծել, որպեսզի կարողանա խառնվել Ադրբեջանի ներքին գործերին եւ միաժամանակ վախեցնել մյուս ինքնիշխան հանրապետություններին, ինչպես նաեւ պահպանել կոմունիստական վարչակարգը»: 1990 թ. հունվարին Կրեմլը խորհրդային բանակի զորամիավորումներ է մտցրել Բաքու նոյաբակ ունենալով փրկել Ադրբեջանում խարխլված կոմունիստական վարչակարգը: Գործողությունը, որը նախապատրաստվել էր ԽՍՀՄ պաշտպանության նախարարության, ներքգործնախարարության եւ ՊԱԿ-ի կողմից, իրականացվել է «Հարված» գաղտնի անվանումով: Գործողության հիմնական դերը կատարել է հատուկ նշանակության «Ալֆա» ջոկատը եւ ՊԱԿ-ի «Ա» խումբը: Գործողությունների հետեւանքով Բաքվում զոհվել են 130 քաղաքացիական անձինք եւ 37 զինվորականներ: Հրազենից վիրավորվել է ավելի քան 700 մարդ, որոնցից 80-ը զինվորականներ են: Այդ գործով իրականացվել է ավելի քան 200 փորձաքննություն, հարցաքննվել են նախկին ԽՍՀՄ եւ Ադրբեջանի բազմաթիվ ղեկավարներ, այդ թվում Ալեքսանդր Լուկյանովը, Դմիտրի Յազովը եւ Վլադիմիր Կրյուչկովը: Հանրապետության դատախազն ընդունել է որոշում, ըստ որի պետք է դատախազություն բերման ենթարկվեն Ադրբեջանի նախկին ղեկավարներ Այազ Մութալիբովը եւ Վիկտոր Պոլյանիչկոն, որոնք այժմ գտնվում են Մոսկվայում եւ խուսափում են վկայություններ տալուց: ■

Յոթ օր Ստեփանակերտում

«Կռվի վերջը հաղթանակն է»

Ստեփանակերտը իմ հարազատ քաղաքն է: Այստեղ ամեն ինչ ինձ ծանոթ է, սրտամոտ: Այստեղ եմ 1940 թվականին ավարտել միջնակարգը, տարիներ շարունակ աշխատել «Ղարաբաղ» թերթում: Այստեղ եմ ընտանիք կազմել:

Ստեփանակերտը տարբերվում է մյուս քաղաքներից իր մարդկանցով, գեղեցկությամբ, ավանդույթներով, նիստ ու կացով: Նա նման է պարտեզի: Նույնիսկ մեր ժողովրդի ամենաոխերիմ թշնամիներից մեկը՝ Միրզաֆար Բաղիրովը, երբ երկար տարիներ տերն ու տնօրենն էր Ադրբեջանի, դեռ 1940-ական թվականներին սիրում էր կրկնել հեռեւյալը. «Մեծ չէ Ստեփանակերտը, ընդամենը մեկուկես տասնյակ հազար բնակություն ունի, բայց ես կցանկանայի, որ Շվեյցարիայի ամենագեղեցիկ քաղաքներն անգամ նման լինեին այժմվա Ստեփանակերտին»:

Ստեփանակերտում եմ, հուլիս, 1992 թվական: Քաղաքի բոլչանքը մնացել է, շենքերի մեծ մասը ոտքի է, մի մասը լրիվ այրված, մի մասը կիսայրված, մի մասի տանիքները, պատուհանները չկան: Չկա մի շենք, որ վիրավոր չլինի: Սակայն վիրավոր ժամանակ էլ Ստեփանակերտը չի կորցրել իր հմայքը:

Այսօր էլ թուրքը շարունակում է գրնդակոծել, ռմբակոծել: Բայց արգելքում ընկնել հնարավոր չէ: Արցախցին, ստեփանակերտցին ոչ սովորական սիրով է համակված իր հողի, գյուղի, քաղաքի նկատմամբ: Այդ սերը նրան ուժ է տալիս, զորավիգ լինում:

Այս օրերին Ստեփանակերտը կարծես հարություն է առնում, մոխիրներից փյունիկի նման ոչնդանանում, գլուխը հպարտորեն վեր բարձրացնում: Կարգավորվում են փողոցները, մարդիկ այս ու այն կողմ են շտապում, շատերն էլ, թեեւ քաղաքում չեն գործում ֆաբրիկաներն ու գործարանները, վաղ առավոտյան գնում են տնամերձ, բանջարանոց-կամ քաղաքամերձ տնտեսությունում աշխատելու:

Ստեփանակերտից Շուշիին ուղիղ նայող հինգ հարկանի շենքերից մեկում եմ, որ կառուցվել է վերջերս: Հանդոգված էլ, որ այն անդայման կդառնա Շուշիի թուրքերի թիրախը: Քանդվել էր միայն տանիքը, վնասվել էին աստիճանի բնակարանների առակիները: Շենքի բնակիչներից Հենրիկ Համբարձումյանը ցույց է տալիս այն նկուղը, որտեղ ընտանիքով, հարեւաններով երկու տարի պատսպարվել են: Սուք է, խոնավ, հնարավորություն չունեցա մինչեւ վերջ իջնել ներքեւ եւ կանգնել գետնին: Խոնավ է նույնիսկ այս արեւոտ օրերին: Զարմանում ես, թե ինչպես ստեփանակերտցին երկու տարուց ավելի մնացել է այս անհիշալի նկուղում կտրված օդից, ջրից, լույսից... Նա պատմեց, թե ինչպես են այդ պայմաններում շաբաթը հազիվ մեկ անգամ 400-500 գրամ ալյուրից յոխա (հաց) թխել վառարանի վրա եւ մի կերպ յոլա գնացել: Փայտն էլ, շարունակում է պատմել Հենրիկ Համբարձումյանը, հնարավոր չէր հայթայթել սառնամանիքին: Այդ պահերին միշ չեն եղել թուրքի պատահական գնդակին զոհ գնացածները:

Քայլում եմ քաղաքում առանց թուրքի գնդակից վախենալու: Կարծես ամեն ինչ կամաց-կամաց կարգավորվում է:

Ջրուցում եմ քաղաքի հին բնակիչներից մեկի՝ Միհայել Թովմասյանի հետ, որ մեկ լինում է Ստեփանակերտում, մեկ էլ իր հայրենի գյուղում Քռասնիում: 83-ամյա Մ. Թովմասյանի դավանանքը արդար վասակն է, հողի հետ աշխատանքը, մարդկային բարի վերաբերմունքը: Այս օրերին նա կարծես նոր ուժ ու եռանդ է առել, լսելով, որ մեր ազատամարտիկները կազմակերպված են գործում, թուրքից խլում են մեր հայրենի օջախները, Մարտակերտը սկսում է շունչ քաշել...

Իմ այն հարցին, թե ե՞րբ կլինի այս կռվի վերջը, նա անթերկայտրեն պատասխանեց. **«Կռվի վերջը հաղթանակն է»:**

Այսպես են մտածում բոլոր արցախցիները, մայրաքաղաքի բոլոր բնակիչները, չնայած հոգնել են այս 4-5 տարիների մղձավանջից, անմարդկային տանջանքից, բնականոն կյանքից զրկված լինելուց:

Այդ է վկայում նաեւ այս օրերին կիսաս մնացած շենքերի կառուցման թափը: Մարդիկ սկսել են կարգավորել իրենց տունն ու բակը, իրենց մերձակա փողոցը:

Շուտով, շատ շուտով քաղաքը կլցվի աշխույժ եռուզեռով, կգործեն աշխատատեղերը, կինչեն գործարանների շչակները, կյանք կառնեն բոլոր դպրոցները, ուսումնական օջախները, կինոթատրոնները, ակումբը, մշակույթի տունը...

Արցախցին կտոնի իր հաղթանակը:

ՍՄԲԱՏ ԱՎԱԳՅԱՆ

digitised by A.R.A.R.@

«Առավոտը» Ադրբեջանի մայրամուտի ցոլքերում

Բաքվի ռադիոհաղորդումների «Առավոտ» լրատվական ծրագրի լուրերի հիման վրա



Ադրբեջանի նախագահ Էլչիբեյի ընտրություններից երկու օր անց Լաչինում Քրդական ազատագրական շարժման գլխավորությամբ նախկին Խ. Միության տարածքներում բնակվող քրդական համայնքների ներկայացուցիչները, հասարակական-քաղաքական կազմակերպությունների ղեկավարները հայտարարեցին Կարմիր Քրդիստանի պետականության վերականգնումը: Ի դաստիարակ, Էլչիբեյը շատ իր մոտ հրավիրեց Բաքվի քրդական միակ օջախի՝ Մշակույթի կենտրոնի ղեկավարին ու անդամներին, իսկ Բաքվի ռադիոյի «Առավոտ» լրատվական ծրագրի հունիսի 24-ի թողարկումը «շողարձակեց» երեք, թե՝ *«հայկական զանգվածային լրատվության միջոցները եւ ագրեսոր հայկական վարձու ծառաները տրխրահռչակ հայտարարություններ ու տեղեկություններ են տարածում, իբր Ադրբեջանում փոքրաթիվ ժողովուրդների իրավունքները ոտնահարվում են»:* Իրենց հերթին նրանք սկսեցին լուրեր տարածել, թե *«հայ անջատողականների դաշնակցական խաղախականությանը զոհ դարձած Հայաստանում բնակվող մոտավորապես 70 հազար ռուս եւ 20 հազար քուրդ աղաստան են գտել Ադրբեջանում»:* Սա հաղորդվեց նաեւ «Վեստի»-ով: Ռուսների «արտագաղթի» մասին ժամանակին հերքեցին իրենք՝ ռուսները, հիշելով Բաքվում 1990 թ. հունվարյան ջարդերը, դեռեւս շարունակվող բռնագաղթերը, ռուսաստյաց խաղաքականությունը: Նույն հաղորդման ժամանակ հաղորդավարը մեջբերել է *«Անկախություն»* թերթի թղթակցին տված Էլչիբեյի հարցազրույցից մի հատված, որտեղ անդրադարձել է փոքրաթիվ ժողովուրդների նկատմամբ հանրապետության իշխանությունների վերաբերմունքին, նշելով. *«ԱԺԵ-ի ղեկավարությունը գտնում է, որ պետք է մշակութային ինքնավարություն ընձեռել Ադրբեջանի փոքրաթիվ ժողովուրդներին: Այսօր հայկական քարոզչությունը արհեստականորեն ուռճացնում եւ տարածում է քրդական ու լեզգիական հիմնախնդիրների առկայությունն Ադրբեջանում: Պատճառն այն է, որ Ադրբեջանն այսօր գտնվում է ծանր կացության մեջ: Իսկ բնականի ձգտում է գտնել նրա թույլ տեղերն ու հարվածներ հասցնել: Սակայն դա մեզ թույլ չենք տա: Ինչպես բոլոր քաղաքակիրթ երկրներում, Ադրբեջանում եւս իրագործվելու են անձի իրավունքները, անկախ նրա ազգային պատկանելությունից»:*

Էլչիբեյի նախորդ Այազ Մութալիբովն արդեն խոստումներ էր տվել, թե քրդերին ինքնավարության հնարավորություն կտրվի: Զարգացման տրամաբանությունը կլիներ, եթե Էլչիբեյն իր նախորդի տված խոստումը կատարեր եւ ծանաչեր ու հարգեր քրդերի կողմից արդեն հայտարարված Քրդիստանի պետականության վերականգնումը, եթե իրոք մտահոգված է քրդերի ճակատագրով: Քրդերին խաբելու եւ սին խոստումներով կերակրելու քարտական փորձը դեմ է առել քրդերի ազգային ինքնագիտակցության զարթոնքին: Նստեր այն հայտարարությունը, թե շուտով լեզգիական, թալիշերեն ու քրդերեն կեսժամանոց հեռուստատեսային հաղորդումներ են լինելու, հասկանալի պատճառներով արդեն չորս տարի կրկնվում է, բայց չի իրագործվում, իսկ Հայաստանում 30 տարուց ավելի ամեն օր մեկուկես ժամ քրդերեն բառաբան է երեւ տրվում:

Հունիսի 27-ի «Առավոտ»ում լսում ենք. *«Ինչպես տեղեկացնում է մամուլը, Աղջաբեդի շրջանում հայտարարվել է արտակարգ դրություն: Այն մասին, թե ինչպիսին է իրավիճակը շրջանում, պատմում է պաշտպանության նախարարության ռազմաիրավաբանական բաժնի պետ, փոխգնդապետ Սիրամ Ջանիբեկովը: Պատասխանելով թղթակցի հարցերին, նա ասում է, որ արտակարգ դրություն է հայտարարվել շրջանում տիրող կացության պատճառով: Աղջաբեդում տեղի է ունենում զինված առճակատում: Այդ իսկ պատճառով հանրապետության նախագահն ստիպված էր դիմել այդ քայլին: Իմը՝ Ջանիբեկովը արտակարգ դրություն հայտարարելուց հետո նույնպես մեկնել է Աղջաբեդ: Շրջանի բնակչությանն առաջարկվել է հանձնել ատրճանի պահվող բոլոր զենքերը, ռազմամթերքը, ռազմական տեխնիկան, խոստանալով, որ այդ ամենը կամավոր պաշտպանության նախարարությանը հանձնելու դեպքում կազատվեն քրեական պատասխանատվությունից:*

Արտակարգ դրությունը հայտարարվել էր 10 օր ժամկետով: Առաջին իսկ օրից բնակչությունը հանձնել է 154 միավոր ավտոմատ հրազեն, գնդացիր, մեծ քանակությամբ զինամթերք: Դա բավականին բեռնվացրել է շրջանի կացությունը: Չնայած խոստումներին, զենքը չեն հանձնել շրջանի ամենամեծ գյուղում՝ Հինդալում: Հարկադրված պետք է դիմել միջոցների, քանի որ զենք կա գյուղում եւ պետք է այն անդայման վերադարձնել: Այդ առաջարկից հետո առաջին օրը բնակչությանը կոչ է արվել ուղղաթիռի միջոցով: Հիմա իրավիճակը համեմատաբար լավ է շրջանում: Չնայած դրան, պաշտպանության նախարարությունը դիմել է հանրապետության նախագահի աշխատակազմին, խնդրելով եւս 20 օրով երկարաձգել արտակարգ դրության ժամկետը՝ զենքի առգրավումը ավարտին հասցնելու համար»:

Նախ, Ջանիբեկովի պարզաբանումը մանվածապատ է, եւ պարզ չէ, թե ինչ պատճառով է արտակարգ դրություն հայտարարվել Աղջաբեդի շրջանում, որը, ըստ գյուղատնտեսական քարտեզների, ձմեռանոց է, լեռնային եւ ցրտաշունչ Լաչինի ու Քելբաջարի շրջանների անասնապահական ֆերմաների համար: Այս շրջանների քրդերը ձմեռանոցները դարձրել են ամառանոց-զորանոցի ոչ իրենց կամքով, այլ ադրբեջանցիների:

Հունիսի 30-ի «Առավոտ» ինֆորմացիոն ծրագիրը հաղորդում է. *«Ադրբեջանի նախագահի հրամանագրով Աղջաբեդի շրջանում հունիսի 15-ից հայտարարվել է արտակարգ դրություն: Պաշտպանության նախարարության խնդրանքով Էլչիբեյը շրջանում արտակարգ դրության ժամկետը երկարաձգել է 20 օրով: Հրամանագիրը հանձնվել է Ազգային մեջլիսի հաստատմանը»:*

Այս հաղորդագրությունը պարզաբանում է հենց Բաքվի ռադիոն իր զանազան հաղորդումներով, ըստ որոնց արտակարգ դրությունը մրցվել է քրդերի շրջանում բռնկված հուզումների պատճառով:

Քրդերի նկատմամբ սկսված բռնությունները տարածվել են ամբողջ հանրապետությունով մեկ: Սա Լաչինում հայտարարված պետականության վերականգնման հայտարարության «ադրբեջաներեն» ընկալման ու արձագանքման յուրահատուկ եղանակ է: Հիշո՞ւմ եք, ինչպես Ադրբեջանը պատասխանեց Լեռնային Ղարաբաղի մարզային խորհրդի 1988 թ. փետրվարի 20-ի որոշմանը: Նույնը կրկնվում է քրդերի նկատմամբ, միայն թե առանց աղմուկի:

Նույն օրվա ծրագրում տեղ է գտել լեզգիներին վերաբերող մի ուրիշ լուր. *«Տեղի ունեցավ Կուսարում աղորող 60 հազար լեզգիների ներկայացուցիչների համաժողովը, որտեղ ընդունվել է լեզգիների դիմումը՝ ուղղված Ադրբեջանի քաղաքացիներին: Լեզգիներ հույս են հայտնում, որ իշխանության գալուց հետո ժողովրդավարական ուժերը կաղաքանեն սահմանադրությամբ երաշխավորված իրենց իրավունքները: Անկասկած, մենք աբանում է հաղորդավարը, այլ կերպ չի կարող լինել: Պարզապես դա մի անհանգստություն է, որ ծնվում է դրսից փչող ազգայնական քամիներից: Ինչպես Կուսարի լեզգիներն են ասում, վերջերս առավել հաճախակի են դարձել վճռական գործողությունների կոչող զանազան էմիսարների այցելությունները: Ռուսաստանի դաշնության նախագահի ազգային հարցերով խորհրդական Գաղինա Ստարովոյտովան վերջերս սկսել է ավելի ուշադիր լինել այս վայրերի նկատմամբ: Ըստ երեւույթին, Մոսկվան հերթական բակարդ է լարում, լեզգի ու ադրբեջանական ժողովուրդների միջեւ: Կայարությունն այժմ իմն է բակարդն ընկել, հուսամ, որ այստեղ եւս չի փրկվի:*

Դաղստանի Գերագույն խորհրդի նախագահ Մուհամեդ Ալմուհամեդովը հայտարարել է, թե Ռուսաստանի Դաշնության եւ Ադրբեջանի միջեւ բոլոր սահմանային հարցերը պետք է լուծվեն միայն Դաղստանի մասնակցությամբ: Ալմուհամեդովը ցանկություն է հայտնել կարեր հաստատել Ադրբեջանի նոր ղեկավարության հետ՝ առաջացած խնդիրները մոտ ապագայում քննարկելու համար»:

Գրեթե նույն ժամանակ հուզումներ ու բռնկումներ տեղի ունեցան Ադրբեջանի հարավում՝ թալիշների շրջանում, որոնք ճնշվեցին բռնությամբ ու զոհերով. վկա աշխարհի լրատվական միջոցների հաղորդումները: Ադրբեջանում առաջանում են նոր արցախներ, սակայն առայժմ ադրբեջանցիները կարողանում են դրանք ծածկել, կարողանում են դեռեւս աշխարհից թաքցնել, որ Ադրբեջանը փոքր կայարություն է, ուր ոտնահարվում են ազգային փոքրամասնությունների իրավունքները, դասաղարտելով նրանց ուծացման եւ դանդաղ մահվան:

ԱԼԻԽԱՆԵ ՄԱՍԵ

Սփյուռքահայ գաղթօջախներ

Հայկական նորահայտ հուշարձան Սերբիայում. Երմենչիչ

Հայաստանից դուրս ստեղված են քարակերտ հազարավոր գանձեր: Դրանցից է նաեւ սերբական Սոկոբանյա առողջարանից ոչ կիլոմետր հեռավորության վրա գտնվող Երմենչիչ (սերբերեն Јермениц բառից, որ նշանակում է հայ) վանքը, որն այսօր էլ անհայտ է հայ ճարտարապետությանը: Հայ գաղթօջախների մեջ Սերբիան թերեւս միակն է, ուր հայերի թիվը բոլոր ժամանակներում էլ սակավ է եղել եւ որտեղ հայ մշակույթի հատուկենտ հուշարձաններ են ստեղծվել: Եթե Բելգրադում 17-րդ դարում եւ Նովի Սադում 18-րդ դարում կառուցված հայկական եկեղեցիների մասին կան առանձին փաստեր ու հիշատակություններ, ապա Երմենչիչ վանքի մասին մինչեւ վերջերս մենք գրեթե ոչինչ չգիտեինք:

Սերբիայում հայ շինարար վարպետների գործունեության մասին կան ոչ միայն վկայություններ, այլեւ արժեքավոր ուսումնասիրություններ: Պատմությանը հայտնի է, որ դեռ 13-րդ դարում սերբ եպիսկոպոս Սուրբ Սավան ճամփորդել է Արեւելքում, իսկ սերբական գրականության խոշորագույն գործիչներից Միլոշ Ցրնյանսկին իր հայտնի աշխատության մեջ նույնիսկ վկայակոչում է, որ Սուրբ Սավան այցելել է նաեւ Հայաստան: Հիանալով հայերի կառուցողական արվեստով, նա որոշել է հայ վարպետներ հրավիրել Սերբիա՝ մասնակցելու եկեղեցիների կառուցման աշխատանքներին: Հենց դա էլ սերբական հուշարձանների վրա հայկական ճարտարապետության ազդեցության պերճախոս վկայությունն է:

Երմենչիչ վանքը թեեւ ավելի ուշ շրջանի կառույց է (14-րդ դարի վերջ), այնուամենայնիվ արժե նշել, որ այդ հուշարձանը դեռ Սուրբ Սավայի օրոք հիմնադրված հայ-սերբական մշակութային կապերի ստեղծման օրգանական շարունակության արտահայտությունն է: Երմենչիչ վանքի մասին պատմությունը երկար ժամանակ լռել է, իսկ սերբական ժողովրդական ավանդույթներից ու սերունդների հիշողություններից ահա թե ինչ է մեզ հասել:

Վանքը հիմնադրվել է Կոսովոյի ճակատամարտից հետո, մոտավորապես 1392 թվականին: Կառուցել են հայ զինվորները, որոնք, ըստ ավանդության, մասնակցել են Կոսովոյի ճակատամարտին (սերբերի եւ թուրքերի միջեւ՝ 1389 թ.): Ուղղափառ սերբերի մասին հայերը մինչ այդ լսել էին, գիտեին, որ Սուրբ Սավան Արեւելքում իր երկարատեւ ճամփորդության ընթացքում եղել է նաեւ Հայաստանում: Երբ հայերին պարզ է դառնում, որ թուրքերը բարբարոսական արշավանք են սկսել սերբերի դեմ, լքում են Կոսովոյի դաշտը եւ փրկվելով թուրքերից, ի երախտագիտություն Աստծո, կառուցում են այդ վանքը՝ նվիրաբերելով այն իրենց փրկարարներին: Կոսովյան դեպքերից հետո ժողովրդի շրջանում վանքն անվանվել է Երմենչիչ: Ի դեպ, այդպես է կոչվում նաեւ Օգրեն լեռան հյուսիս-արեւմտյան ողջ հատվածը, որտեղ գտնվում է հուշարձանը:

Երմենչիչ վանքը կանգուն է եղել մինչեւ 1796-97 թվականները, հետո այրվել ու ավերվել է թուրքերի կողմից: Նշենք, որ մինչ այդ, 1739-ին, թուրքերն արդեն պաշարել են Բելգրադը, ավերել շատ հուշարձաններ, այդ թվում նաեւ տեղի հայկական եկեղեցին՝ ստիպելով հայերին եւ նրանց հոգեւոր առաջնորդ Հակոբ Երզրումցուն լքել քաղաքը: Արդեն 19-րդ դարի սկզբներին, սերբական առաջին ապստամբությունից (1804-1813) առաջ, Սոկոբանյայում, Երմենչիչ վանքից հիշ հեռու, կազմավորվում են հայդուկային ջոկատներ, որոնց նպատակն էր երկրից դուրս հանել թուրքերին: Հայդուկ Վելկոն, Ստեւան Սինջելիչը, Պետար Դոբրնյացը, անվանի ուրիշ հայդուկներ կանխում են թուրքերի առաջխաղացումը եւ պարտության մատնում նրանց Ալեքսինաց-Նիշ ուղղությամբ: Իմանալով այդ մասին, Նիշի թուրք փաշան իր զորքով շարժվում է Սոկոբանյայի ուղղությամբ՝ նպատակ ունենալով պատասխան հակահարված տալ հայդուկներին: Վերջիններս փախչում են Նեգոտին, իսկ թուրքերն ավերում են Սոկոբանյայի տարածքում գտնվող հուշարձանները, այդ թվում նաեւ Երմենչիչը, որն, ըստ էության, հայդուկների հավաքատեղին էր:

Մինչեւ 1806 թվականը վանքը լքված ու ավերված էր: Սերբական առաջին ապստամբության տարիներին, ազգային զորավար Կարաջորջեի օրոք, վանքը վերականգնվում է եւ ծառայում որպես զինվորական բուժարան, ուր վիրավորներ էին բերում Դելիգրադյան մարտերից: Վանքի հարեւանությամբ ժամանակին նաեւ գերեզմանոցներ են եղել, որոնք մեզ են հասել, ցավոք, առանց հիշատակությունների: Սերբական երկրորդ ապստամբության (1815) ժամանակ վանքը կրկին ավերվել է, բայց տասնամյակներ անց (ենթադրվում է՝ 1892-ին) կրկին վերականգնվել: 1926-ին Երմենչիչը կրկին ավերվել է ու այդպես մնացել մի քանի տասնամյակ: Միայն վերջերս պարզ դարձավ, որ տեղի հոգեւորականների նախաձեռնությամբ եւ Նիշ քաղաքի հուշարձանների պահպանության վարչության առաջարկած նախագծով նախատեսվում է վերականգնել Երմենչիչի վանքը: Այդ գործին մեծ չափով նպաստում է Սոկոբանյայի հոգեւոր առաջնորդ եւ տեղի եկեղեցու ծխական քահանա Պետար Միլինկովիչը: Հիշատակման մի շարք փաստաթղթեր հրապարակվում են ըստ հոգեւորականի գրավոր վկայությունների:

Երմենչիչ վանքի մասին այս պատմական ակնարկը բոլորովին նոր, բայց ուսումնասիրման կարոտ մի վավերագիր է հայ-սերբական մշակութային կապերի յոթդարյա կենսագրության մեջ: Հարկավոր է պահպանել սերբահայ մշակույթի մեզ հասած թերեւս միակ ու ինքնատիպ մասունքը, քանի որ այսօր էլ մերձակա Ալեքսինաց, Կնյաժեւաց, Նիշ, Սոկոբանյա քաղաքներում հայեր են ապրում: Իր վկայություններում սերբ հոգեւորականը նշում է, որ նոպատակ ունեն եկեղեցու մերձակայքում կառուցել հայկական ավանդական ճարտարապետության ոճով ոչ մեծ տուն եւ մշտական ծառայության հրավիրել հոգեւոր հովվի:

Այդ ծրագրի իրականացումը երկար ժամանակ, լուրջ վերաբերմունք եւ զգալի նյութական միջոցներ է պահանջում: Պետք է հուսալ, որ անոյշման կգան ավելի լավ ժամանակներ, եւ այդ ամենը իրականություն կդառնա: Այդ դեպքում արդեն վերածնված Երմենչիչ վանքը հայ-սերբական հոգեւոր ու մշակութային դարավոր կապերը խորհրդանշող մի նոր կամուրջ կդառնա:

ԲԱԲԿԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

Դպրոցում դասերը կսկսվեն սեպտեմբերի մեկից

Հանրապետության միջնակարգ ուսումնական հաստատություններում դասերը սկսելու ժամկետի շուրջ տարբեր լուրեր էին պտտվում: Պարզաբանումների համար դիմեցինք ՀՀ լուսավորության նախարար Հայկ Ղազարյանին:

«Մեր նախարարության առաջարկով հանրապետության կառավարությունը որոշում էր ընդունել նոր ուսումնական տարին սկսել օգոստոսի 17-ից: Բայց այդ ժամկետի վերաբերյալ ստացվեցին բավականին հիմնավորված առարկություններ եւ ՀՀ ԳԽ կրթության, գիտության, լեզվի եւ մշակույթի հանձնաժողովը, մեր մասնակցությամբ քննարկելով թեր ու դեմ բոլոր փաստաթղթերը, ի վերջո երաշխավորեց դասերը սեպտեմբերի մեկից սկսելու տարբերակը:

Լուսավորության նախարարության կոլեգիան հուլիսի 21-ի իր նիստում որոշեց չխախտել դպրոցներում դասերի սկսման ավանդական օրը:

Միաժամանակ ավելացնեմ, որ այս ուսումնական տարում միջնակարգ բոլոր հաստատությունները դարձյալ վեցօրյա կդառնան, իսկ դասերը կանցկացվեն երկու կիսամյակով՝ առաջինը կտեւի սեպտեմբերի 1-ից մինչեւ դեկտեմբերի 12-ը, երկրորդը՝ հաջորդ տարվա մարտի 1-ից հունիսի 15-ը:

Մի քանի խոսք դասագրքերի մասին: Կառավարությունը կարողացավ իր սուղ միջոցներից դրսացիա հատկացնել եւ դրանք այսօր վաճառվում են համեմատաբար մատչելի գներով՝ միջին հաշվով դրանց արժեքը կազմում է 40 ռուբլի, իսկ սոցիալապես անապահով ընտանիքների երեխաները դրանք անվճար կստանան»:

Հ. Պ.

digitised by A.R.A.R.@

«Թշնամուս թշնամին իմ բարեկամն է»

Թուրքիան ողջունում է Տեր-Պետրոսյանի հակադաշնակցական դիրքորոշումը

Նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի հեռուստաելույթը լայն արձագանք գտավ ոչ միայն Հայաստանում, այլեւ նրա սահմաններից դուրս: Ընդդիմության ներկայացուցիչների կարծիքով, այն Ազգային դաշինքի պատահանքով հրավիրված ՀՀ Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջանը բուն նպատակից շեղելու, Շահումյանի, ապա նաեւ Մարտակերտի անկումը երկրորդ պլան մղելու, ՀՅԴ համագումարը ծախողելու փորձ էր: Միեւնույն ժամանակ կարծիք արտահայտվեց այն մասին, թե Հայաստանի ներկայիս ծանր կացությունը բացատրելով Արցախի խնդրի գոյության փաստով, նախագահը սեղ խրեց նույն ժողովրդի երկու հատվածների միջեւ: Տեղին է նաեւ նշել, որ նա իր ելույթում ազերի հրոսակների դեմ հերոսաբար մարտնչող ազատամարտիկներին դաշնակցականների եւ ոչ դաշնակցականների բաժանելու անզգուշություն ցուցաբերեց, դրանով էլ թուլացրեց ինքնապաշտպանությունը Մարտակերտի անկման նախօրյակին: Իսկ արտասահմանից ղեկավարվելու վերաբերյալ դաշնակցականներին ուղղված մեղադրանքն ինքնին Հայաստանի եւ սփյուռքի միջեւ անդունդն էլ ավելի խորացնելու փորձ էր, քանի որ Աբենը հայերի համար նույնպես սփյուռք է: Այդ առումով մտահոգիչ է, թե ինչու նախագահը «քարոզանք» անելու համար Ազգային դաշինքի միջից ընտրեց հենց դաշնակներին: Ի վերջո, արտահերթ նստաշրջանում իշխանությունների դեմ պայքարի մեջ էին մտել ընդդիմադիր բոլոր կուսակցությունները:

Այս դեպքում նախագահի հեռուստաելույթի մանրամասներին անդրադառնալու նպատակ չենք հետապնդում: Պարզապես նշենք, որ նախագահի այդ ելույթի պատճառով ուշադրությունից վրիպեցին նաեւ արտահերթ նստաշրջանում նրա ունեցած այլ ելույթները: Մինչդեռ, դրանք լրացնում են միմյանց:

Նստաշրջանի իր ելույթներում նախագահն ընդդիմության դեմ պայքարելու վճռականություն հայտնեց, հատուկ շեշտելով, թե այդ պայքարն ընթանալու է սահմանադրական հիմունքներով, ապա նշեց, որ ինքը 50 հոգու փոխարեն ի վիճակի է հրապարակ դուրս բերել 100-200 հազար մարդու: Այլ կերպ ասած, նախագահն ազդանշան էր տալիս, թե Հայաստանում ժողովրդականություն են վայելում ներկայիս իշխանությունները եւ ժողովուրդն ընդդիմությանը չի աջակցում, իշխանությունները հարազատ են մնում մեր չունեցած սահմանադրությանը, դրանով էլ արտահայտում են ժողովրդավարության սկզբունքներին իրենց զորավիգ լինելը:

Այդ ազդանշաններին արձագանքեց ԱՄՆ-ի վարչակարգը: Հանձինս Քյամուրան Գյուրունի, արձագանքեց նաեւ մեր շրջանում ԱՄՆ-ի գործերի կառավարչի դեր կատարող Թուրքիան: Նշենք, որ Հայաստանը Թուրքիայի համար յուրահատուկ նշանակություն ունի, իսկ ինքը՝ Գյուրունը, տարիներ շարունակ վարել է Թուրքիայի արտակարգ եւ լիազոր դեսպանի պաշտոններ տարբեր երկրներում: Ելնելով այդ հանգամանքից, Գյուրունի մեկնաբանությունները կապված իշխանություններ-ընդդիմություն պայքարի հետ կարելի է վերագրել թուրքական պետությանը:

«Հյուրրիյեթ»-ի հուլիսի 10-ի համարում լույս տեսած հոդվածով Գյուրունը նախ մտահոգություն է հայտնում Հայաստանում դաշնակցականների ակտիվացման առնչությամբ, ապա մեզ առաջարկում է մոռացության տալ Հայ դատն ու պահանջատիրությունը, չեզոքացնել սփյուռքի ազդեցությունը Հայաստանում, հրաժարվել Արցախյան պայքարից, քանի որ դա անհույս է: Միաժամանակ Գյուրունը գտնում է, որ Հայաստանի ներկայիս ծանր կացության համար մեղավոր են Հայաստանի եւ Արցախի խորհրդարաններում տեղ գտած դաշնակցականները: Նա հոդվածի վերջում հավանություն տալով նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի հաղթականությանը, ՀՅԴ-ի դեմ պայքարում անկեղծ արտով հաջողություն է ցանկանում նրան:

Սա պատահական չէ: ՀՀՇ իշխանությունների երկրորդ տարում Գեղարքունիքը կրկնվում է երկրորդ անգամ եւ անհամեմատ մեծ ծավալներով: Եթե Գեղարքունիքը ծածկագրվեց իշխանությունների կողմից, ապա Շահումյանը ծարպկորեն մոռացության տրվեց: Սակայն Գեղարքունիքից հետո գոնե խայտառակ ինքնարկում տեղի չէր ունեցել: Շահումյանի անկումից հետո իշխանության ներկայացուցիչները, ելույթ ունենալով արտահերթ նստաշրջանում, ածպարտեցին հայտարարել. *«Եկեք ընդունենք, որ թշնամին ուժեղ է եւ մենք պարտվեցինք»:* Մինչդեռ, անհրաժեշտ է պարզաբանել՝ թշնամին ազերի հրոսակնե՞րն էին, թե՞ մեր դարավոր թշնամիներից միշ տարբերվող ռուսները:

Թեեւ ընդդիմության ճնշման տակ բարձրացվեց ԼՂՀՆ ճանաչելու հարցը, սակայն իշխանությունները տարալեցին նաեւ դա: Ճանաչումը Ղարաբաղյան խնդրի կարգավորման հարցում գուցե շոշափելի արդյունք չտար, բայց գոնե դրանով Հայաստանը կձգտեր իր անորոշ դիրքորոշումը: Եթե այսօր միջազգային հանրության նժարը թեքվել է Ադրբեջանի կողմը, ապա դա մեծապես պայմանավորված է իշխանությունների կողմից որդեգրված քաղաքականությամբ, իսկ դրանց անորոշ դիրքորոշումը նպաստել է Հայաստանի մեկուսացմանը, դրանով ջուր լցնելով Թուրքիայի ջրաղացին:

Նստաշրջանը չճանաչեց ԼՂՀ-ի անկախությունը, ավելին, նախագահն իր ելույթներով նստաշրջանի աշխատանքները վերածեց իշխանություններ-ընդդիմություն հակամարտության: Դրան հաջորդեց ԳԽ նախագահ Բաբկեն Արարքցյանի վերջնագրի բնույթի հայտարարությունը: Նա ցինիզմի հասնող անկեղծությամբ հայտարարեց, թե ԼՂՀ-ի անկախության ճանաչումը ՀՀ Գերագույն խորհրդի լիազորությունների մեջ չի մտնում: Պարոն Արարքցյանին հետեւեց էդվարդ Եգորյանը, ասելով. *«Ազգային դաշինքը Արցախում անվստահություն է սերմանում Հայաստանի իշխանությունների նկատմամբ, որպեսզի Արցախի բնակչությունը, իրեն անպաշտպան զգալով, գա Հայաստան, եւ ընդդիմությունը իշխանությունը գրավի՝ արդեն ապանց Արցախի հիմնահարցի»:*

Ցավոք, այս ամենը տեղի էր ունենում Շահումյանի անկման օրերին: Թերեւս Արցախում կրած պարտության վերաբերյալ գլխավորող էին Խալիկ Սամբոլցյանի խորհրդատու դաստողությունները: Շահումյանի անկումից երկու շաբաթ անց ահա թե ինչ է ասում նա. *«Եթե Շահումյանի անկումն իրոք դավաճանության հետեւանք է, եթե կան դավաճաններ՝ պետք է պատժվեն պատերազմի ամենախիստ օրենքներով: Ես քրիստոնյա եմ... Սակայն Աստվածաշունչն ինքն էլ չի ներում դավաճանությունը»:* Վերջին պարտությունների լույսի տակ մնում է մեզ ասել, եթե պրն. Սամբոլցյանը ճշմարիտ քրիստոնյա է, ապա պետք է ընդունի Աստվածաշնչի հետեւյալ առածի ճշմարտացիությունը ՀՀՇ-ական իշխանությունների համար. *«Դուք կշտվեցիք, բայց շատ թեթեւ դուրս եկաք»:*

ՀԱԿՈԲ ՇԱՔՐՅԱՆ



Արեւելքը շատ «հանճարներ» է տեսել, սակայն այսպիսին...

Այսօր բոլորի համար ակնհայտ է դառնում, որ Էլչիբեյի իշխանության գալուց հետո ռազմական գործողությունները Լեռնային Ղարաբաղում ավելի ու ավելի են վերածվում լայնածավալ պատերազմի: Ադրբեջանի գլուխ է անցել մի «գիշանգդ», որը ճգնում է իրեն ծեւացնել «աղավնի»: Հարեւան երկրի «տիրոջ» ճառերը, անշուշտ, նախատեսված են այլ լսարանի համար՝ պետք եղած տպավորությունը գործելու: Պատմական այս կամ այն երեւույթը գնահատելիս Էլչիբեյը «խիզախորեն» այն ծեւում է իրեն բնորոշ պարզունակ եզրահանգումներով: Դա հատկապես ցայտունորեն է երեւում Անդրկովկասում տեղի ունեցող բարդ եւ կնճռոտ երեւույթների վերաբերյալ դատողություններում: Այդպիսի տպավորություն է թողնում այն հարցազրույցը, որ նա օրերս տվել էր «Մոսկովսկիե Նովոստի» թերթին:

– Ռուսաստանում ցանկանում են պատկերացում կազմել ոչ միայն ադրբեջանական նոր իշխանության կոնկրետ քայլերի մասին, այլեւ այն մասին, թե ինչ գաղափարներով է նա առաջնորդվում: Ադրբեջանը կգնա՞ արդյոք ժողովրդավարության ուղիով:

– Ինձ համար ժողովրդավարությունը կառավարման ձեւերից ինչ-որ մեկը չէ, որը ինձ ավելի է դուր գալիս: Ես ժողովրդավարությունը հասկանում եմ որպես ժամանակակից աշխարհի մի կանոնակարգ: Միայն ժողովրդավարության ժամանակ է, որ հասարակությունը կարող է խուսափել հեղափոխությունից եւ քաղաքականությունը եւ քաղաքական կառուցվածքը հարմարեցնել փոփոխվող իրադրությանը: Վերջին հաշվով ժողովրդավարությունը այլընտրանք չունի: Իհարկե, միայն վերջին հաշվով: Ի՞նչ արդյունքներ ունեցավ Ֆրանսիան երկու հարյուր տարվա ընթացքում, որքան արյուն նա թափեց, մինչեւ մշակեց կյանքի ժողովրդավարական ձեւերը՝ «ժողովրդավարական սովորույթները»: Ադրբեջանի ժողովրդի համար երկընտրանք չկա:

– Գոյություն ունի պատկերացում, թե ժողովրդավարությունը կապված է եւրոպական, քրիստոնեական մշակույթի հետ, իսկ մուսուլմանական երկրներին ժողովրդավարություն հաստատելը բավականին բարդ է:

– Դա անհեթեթություն է: Եւ մուսուլմանական, եւ քրիստոնյա աշխարհում եղել են քաղաքական զարգացման տարբեր ուղիներ, եւ ասել, թե Ռուսաստանի ժողովրդավարական զարգացումը եղավ ավելի դյուրին, քան, ասենք, Թուրքիայի, չի կարելի: Առաջին ազատական կանոնադրությունն այնտեղ ընդունվեց ոչ թե 1905 թվականին, ինչպես Ռուսաստանում, այլ 1876-ին եւ այսօր դա ժողովրդավարական քաղաքական համակարգով եւ զարգացած տնտեսությամբ մի հասարակություն է, իսկ Ռուսաստանը դեռ նոր է ձգտում ժողովրդավարություն ստեղծել: Հավանաբար յուրաքանչյուր ժողովրդի մեջ մի բան կա, որի վրա կարելի է հենվել ժողովրդավարություն կառուցելու ժամանակ, եւ այն, ինչ խանգարում է դրան: Մուսուլմանական ժողովուրդների մոտ առաջինը ավելի դպրաս չէ, իսկ երկրորդը ավելի շատ, քան քրիստոնյա ժողովուրդների մոտ: Հիշենք, որ մահմեդականները երբեք չէին արտաքսում քրիստոնյաներին իրենց երկրներից, ինչպես իսպանացիները վոնդեցին մավրերին. ինկվիզիցիան մուսուլմանները չեն հորինել: Եւ Հիտլերին, եւ Ստալինին աշխարհին նրանք չեն նվիրաբերել:

– Սակայն ստերեոտիպերը չափազանց ուժեղ են:

– Անկասկած: Ռուսներից շատերը, իմ կարծիքով, այնքան էլ չեն հավատում, թե ադրբեջանցիները կարող են ձգտել ժողովրդավարության: Իսկ ահա Հայաստանը, Վրաստանը՝ այլ հարց է: Եւ, իհարկե, հայ-ադրբեջանական հակամարտության ձեր ընկալումը նախատրամադրված էր: Ինձ թվում է, ռուսներից շատերը ադրբեջանական կողմին ընկալում էին ենիչերի, բաշիբոզուկ կերպարանքով, հիշում էին «թուրքական զազանությունները»: Իսկ որ մուսուլմանական շատ ժողովուրդների մոտ գոյություն ունի «ռուսական զազանության» պատկերը, ռուսները, որպես կանոն, կասկածի չեն ենթարկում: Իսկ հայերի հետ անմիջապես կապվում էր «ցեղասպանություն» պատկերը: Այժմ, իմ կարծիքով, վերաբերմունքը ինչ-որ չափով փոխվում է: Խոջալուի եւ Լաչինի գրավումից հետո կարծել, թե մուսուլմանական խոշոր զանգվածը փորձում է ճնշել մի փոքրիկ քրիստոնյա ժողովուրդ, արդեն չի կարելի:

– Մեզանում երբեմն ասում են, որ դրա խորքային աղբյուրը քրիստոնյա եւ մահմեդական մշակույթների անհամատեղելիության մեջ է:

– Կարծում եմ, դա էլ է անհեթեթություն: Հարյուր հազարավոր հայեր աղրում էին Բաքվում, հարյուր հազարավոր ադրբեջանցիներ՝ Հայաստանում, կան տասնյակ հազար խառը ամուսնություններ: Թուրքիայում ոչ միայն 1915 թվականի ջարդեր են եղել, այլեւ կայսրությունում ժողովուրդների երկարատեւ գոյակցման պատմություն, որը պետք չէ իդեալականացնել, բայց եւ չի կարելի մոռացության՝ տալ: Սուլթանական Թուրքիայում հայերից շատերը եղել են եւ նախարարներ, եւ զորավարներ, եւ գիտնականներ: Այժմ էլ Թուրքիայում հանգիստ ապրում են հարյուր հազարից ավելի հայեր: Մեր հակամարտությունը ավելի «խորքային» չէ, քան հարյուրավոր ազգային այլ հակամարտություններ: Թուրքիայում 1915 թվականի իրադարձություններից ստեղծվեց մի առասպել: 1915 թվականի պատմությունը շատ բարդ է եւ չի կարելի գնահատել: Ես ցանկանում եմ, որ ինձ ճիշտ հասկանան: Ես առարկում եմ «ցեղասպանություն» բառի դեմ, բայց որ այն ահավոր իրադարձությունները խոր վերք թողցին հայ ազգի հոգում՝ դա փաստ է: Նկատեմ, որ ադրբեջանական ժողովրդի նույնպես հետ մնաց 1918 թվական այն իրադարձությունները, որոնք 80-100 տարվա վաղեմություն ունեն, գրեթե ամբողջությամբ խեղաթյուրված են կամ էլ խիստ չափազանցված: Չպետք է մոռանալ, որ դրանք ստի ավելի մեծ կսկիծով տեղ են գտնում բուրք ժողովրդի ենթագիտակցության մեջ: Սակայն ոխակալությունը խորթ է բուրք ժողովրդին, այդ իսկ պատճառով նա նպատակահարմար է գտել մոռացության տալ ողբերգական այդ իրադարձությունների պատճառած վիշտը: Սփյուռքում դաշնակները 1974 թվականից ի վեր տարբեր պատճառներով եւ մղումներով, որոնք նկատվել են նաեւ Տեր-Պետրոսյանի կողմից, փորփրելով նման թեմաներ, մորմոքում են բուրք ժողովրդի սղիացած վերքերը: Ի դեպ, դա Հայաստանի շահերին բոլորովին չի համապատասխանում եւ որեւէ օգուտ նրան չի կարող տալ: Հետեւաբար Թուրքիան, առաջ քաշելով «պատմությունը պատմաբանների ուսումնասիրությանը թողնելու» տեսակետը, առաջնորդվում է ոչ այնքան իր սեփական շահերով, որքան որ Հայաստանին մատնացույց է անում ճշմարիտ ճանապարհը:

Թուրքիան ճանաչել է Հայաստանի անկախությունը: Թերեւս դարաբաղը զենքի ուժով միավորելու Հայաստանի ձգտումն է, որ երկու երկրների միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատման գլխավոր խոչընդոտն է: Ռուսաստանի ղեկավարներն անգամ բացահայտ ընդունում են, որ այսօր աշխարհում զենքի ուժով բռնակցված տարածքները այդ նույն եղանակով ետ են հանձնվում դրանց իսկական տերերին:

Այս ճշմարտությունը եւս ընկալվում է Տեր-Պետրոսյանի կողմից եւ սա մեզ մոտ մեծ գոհունակություն է առաջացրել:

Սփյուռքահայությունը սփռված է աշխարհով մեկ: Սակայն հայկական անկախ պետականության կառավարումը թողնել սփյուռքի ձեռքին, կարեւորագույն պաշտոնները սփյուռքի ներկայացուցիչներին հանձնելը կստեղծի այն տպավորությունը, թե Հայաստանում պետություն ղեկավարելու արժանի մարդիկ չկան: Այդ տպավորությունն ինքնին Հայաստանի համար օգտավետ չի լինի:

Սփյուռքի դաշնակները զենք-զինամթերք հայթայթելու գործում ի վիճակի են Ֆինանսավորել Հայաստանին, սակայն զենք ու զինամթերքի օգտագործման հետեւանքով չմոռանանք, որ զոհվելու են ոչ թե սփյուռքի, այլ Հայաստանի հայերը: Մեզ թվում է, Տեր-Պետրոսյանը պաշտոնի բերումով պատասխանատու է ոչ թե սփյուռքահայության, այլ Հայաստանի Հանրապետության բնակիչների առաջ: Եթե Հայաստանում կենսապայմանները անտանելի են դարձել, ապա դա ազերիների կամ թուրքերի մեղքով չէ, այլ Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի խորհրդարաններում տեղ գտած դաշնակցականների գործունեության հետեւանքն է:

Մարուխյանի վտարման որոշումը Թուրքիան գնահատում է որպես Հայաստանը ոչ թե այլ երկրներից կամ աշխարհի այլ կենտրոններից, այլեւ ուղղակիորեն Երեւանից կառավարելու առաջին նախանշանը, եւ Տեր-Պետրոսյանին հաջողություն ենք ցանկանում Հայաստանը արկածախնդրության մեջ ներքաշողների դեմ անզիջում պայքարում: ■

digitised by A.R.A.R.@

թվականին հայկական ջոկատների գազանություններից: Հայերի մեջ գոյություն ուներ անցյալի կրկնության վախը, ազգայնականության եւ ռեւանշիզմի համար առաջացավ հոգեբանական հող: Եւ դրանից օգտվեցին դեմագոգները եւ անսկզբունք խաղամագեները: Նրանք կարող են ժողովուրդը քաշել մի այնպիսի կացության մեջ, որից նա վախենում եւ ծգտում էր խուսափել: Եկեք մի ռոդեով պատկերացնենք թե ի՞նչ կլիներ, եթե 1988 թվականին հայերը բավարարվեին նրանով, ինչ առաջարկում էր Գորբաչովը Ղարաբաղին՝ մշակութային ինքնավարություն, տնտեսական բարեփոխում, առանց կարգավիճակի փոփոխության: Որքա՞ն տառապանքից կխուսափեին եւ ադրբեջանցիները, եւ հայերը: Ես կարծում եմ, որ Հայաստանն իր միջազգային կապերով, իր ժողովրդի աշխատասիրությամբ այժմ կլիներ նախկին ԽՍՀՄ-ի տարածքում ամենահարուստ եւ ծաղկուն հանրապետություններից մեկը:

Սակայն այսօր Հայաստանի վիճակը սոսկալի է, եւ, գլխավորը, անհույս: Հայ ջոկատների հաղթանակները Պյուռոսյան հաղթանակներ են: Այդպիսի պատերազմում հաղթել անհնարին է: Ոչ միայն ադրբեջանական ժողովուրդը բույլ չի տա, աշխարհն էլ բույլ չի տա: Մեր ժամանակներում սահմանները զավթողականությամբ փոխել ոչ մեկին չի հաջողվի:

– Դուք ամուր կանգնած եք սահմանների անփոփոխելիության սկզբունքի վրա: Սակայն այդ սկզբունքը կատարյալ չի: Այն գրանցում է պատմության կողմից ստեղծված, բայց եւ բնավ ոչ արդարացի ժողովուրդների առաջնայնությունը: Ստացվում է, որ մուդավները, օրինակ, իրավունք ունեն ունենալու իրենց պետությունը, իսկ գագաուզները՝ ոչ:

– Ես չեմ ասում, թե այդ սկզբունքը բացարձակ արդարացի է: Սակայն մարդկությունը նախապատվությունը տալիս է դրան, որովհետեւ դա չարյաց փոքրագույնն է: Յուրաքանչյուր օրենք մինչեւ վերջ չէ, որ արդարացի է: Սակայն օրենքի այլընտրանքն արդեն դա անօրինականություն եւ անարխիա է: Հնարավոր է, որ 50 տարի հետո պետական սահմանները ոչ մի դեր չխաղան: Սակայն հիմա հրաժարվել դրանց անխախտելիության սկզբունքից կնշանակի բոլորիս տանել դեպի արյունալի քաոս: Բացառություն լինել չի կարող: Ֆրանսիան չի կարող հրաժարվել Գերմանիայի վրա եւ նրանից զավթել, ասենք, Սաարը, եւ հայերին նույնպես բույլ չի տրվի զավթել ադրբեջանական տարածքը:

– Դուք հավատո՞ւմ եք դարաբաղյան հակամարտության լուծման հնարավորությանը:

– Իհարկե, հավատում եմ: Մենք ստեղծում ենք մեր բանակը՝ իսկական, կարգապահ բանակ, եւ հայերը շուտով կհասկանան, որ պատերազմով նրանք ոչնչի չեն հասնի: Միաժամանակ մենք պատրաստ ենք ցանկացած բանակցությունների եւ ողջունում ենք ցանկացած միջնորդական ջանքերը: Բանակցությունների առարկա կարող է լինել ամեն ինչ, բացի մեկից՝ տարածքից: Մենք այժմ շատ հույսեր ունենք Ամերիկայի եւ Եւրոպայի օգնության վրա:

– Իսկ Ռուսաստանի օգնության եւ միջնորդության վրա՞:

– Մենք ուրախ կլինեինք նման օգնությանը: Սակայն Ռուսաստանն, իմ կարծիքով, այժմ պարզորոշ քաղաքականություն չունի ոչ Անդրկովկասում, ոչ էլ նախկին ԽՍՀՄ հանրապետություններում: Չեր քաղաքականության մեջ մեկ ժողովրդավարական, մեկ մեծապետական միտումներ են ի հայտ գալիս: Մի ղեկավար մի բան է ասում, մյուսը՝ ուրիշ:

– Ռուսաստանի ո՞ր քաղաքական գործիչն է ձեզ ավելի մոտ:

– Ես մեծ հարգանքով եմ վերաբերվում ռուսաստանյան ժողովրդավարորեն ընտրված բոլոր ղեկավարներին: Բայց եւ այնպես, իմ կարծիքով, այն մարդը, որը բոլորից շատ բան արեց Ռուսաստանում ժողովրդավարության համար՝ դա Գորբաչովն էր: Բոլոր սխալներով հանդերձ, այդ թվում նաեւ մեր նկատմամբ, նրա մոտ առաջնային էր ժողովրդավարությունը, այլ ոչ թե անձնական իշխանությունը: Եւ նա հեռացավ արժանավայել կերպով, չկառչելով իշխանությանը:

– Ինչպե՞ս եք վերաբերվում Իրանի դիվանագիտական ջանքերին:

– Իրանի համար ժողովրդավարական, աշխարհիկ Ադրբեջանը, հաշվի առնելով Իրանում հսկայական եւ իրավազուրկ ադրբեջանական բնակչությունը՝ սուր դանակի պես է: Նրա համար ավելի լավ է իսլամական ներկով վերանորոգված կոմունիստական նոմենկլատուրան: Իմ կարծիքով, Իրանը ոչ այնքան միջնորդում էր, որքան պոռոտ ջրում ձուկ որսում:

– Ներկայումս Ադրբեջանում ուրվագծվում են էթնիկական նոր հակամարտություններ: Հյուսիսում ուժեղանում է լեզգիական շարժումը: Ինչ սկզբունքով եք դուք դեկավարվում դրանց նկատմամբ:

– Նույն ընդհանուր ժամանակակից ժողովրդավարական սկզբունքներով, ինչպես հայերի նկատմամբ: Մշակութային ինքնավարություն՝ խնդրեմ, ինչպիսին ուզում եք: Սակայն Ադրբեջանի սահմանները, տարածքային ամբողջականությունը քննարկման ենթակա չեն:

– Ի՞նչպես եք դուք վերաբերվում Ադրբեջանից ռուսների արտագաղթին:

– Իհարկե, վատ: Դրա հիմնական պատճառը քաղաքական անկայունությունն է, վախը: Կարծում եմ, երբ իրադրությունը կայունանա, արտագաղթը կդադարի, իսկ գնացածներից շատերը կվերադառնան:

– Իսկ Բաքվից մնացած հայերը կարո՞ղ են վերադառնալ:

– Ես հավատում եմ, որ երբեւէ, գուցե ավելի շատ, քան մենք կարող ենք պատկերացնել, ադրբեջանցիները կաղրեն Հայաստանում, իսկ հայերը՝ մեզ մոտ: 1945 թվականին ոչ ոք թերեւս չէր պատկերացնում, որ գերմանացիների եւ ֆրանսիացիների միջեւ կլինեն այնպիսի հարաբերություններ, ինչպիսիք են այսօր:

– Չեզ չի՞ վախեցնում Գամսախուրդիայի օրինակը: Չէ՞ որ նա էլ, ինչպես եւ դուք, ժողովրդավար էր, ենթարկվել էր հալածանքների, իշխանության եկավ ժողովրդական խանդավառության ալիքի վրա, հավանաբար, ամենաազնիվ նկատառումներով: Նույնիսկ դուք երկուսդ էլ մասնագիտությամբ բանաստեղծ եք: Արդյունքում Վրաստանը լցված է արյունով:

– Վրաստանն ադրբեջանական ժողովրդավարության համար մեծ դաս է: Գամսախուրդիայի դեմ, իհարկե, գործում էին հզոր ուժեր, նախ եւ առաջ Մոսկվայում, բայց նաեւ Բաքվում եւ Երեւանում: Նմանապես, ինչպես այժմ, նրանք կարող են գործել մեր դեմ: Սակայն Գամսախուրդիան էլ մեղք չունի: Նա «խաղագումարը» դրեց ազգայնականության վրա, մտածելով համախմբել ազգը: Արյունքում վրացիներին ներքաշեց ազգամիջյան հակամարտության մեջ: Տնտեսական բարեփոխումների, հասարակական կյանքի ժողովրդավարացման մասին նա ավելի քիչ էր մտածում:

– Ի՞նչ եք ցանկանում ասել մեր ընթերցողներին:

– Ես ուզում եմ ավարտել նրանով, ինչով սկսեցի: Ի վերջո աշխարհը ժողովրդավարական կլինի: Սակայն Ադրբեջանը գտնվում է ուղեծրաժանի վրա: Եւ ոչ միայն Ադրբեջանը: Եթե այստեղ՝ մեզ մոտ ժողովրդավարությունն ամրանա, հսկայական ազդեցություն կունենա ամբողջ երջանի վրա՝ Միջին Ասիայի, Իրանի, Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի: Այնպես ստացվեց, որ մեր խաղաղությունից կամ ծախողումից է կախված մոտակա ժամանակներում ժողովրդավարության ճակատագիրը այս հսկայական երջանում: Եւ ես ուզում եմ, որպեսզի Ռուսաստանում ժողովրդավարորեն տրամադրված մարդիկ այդ հասկանան եւ գործեն դրան համաչափ: ■

Հայաստանը կիսում է երրորդ երկրների ճակատագիրը

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՈՏԱԽՏ ՌՈՒՍԱԿԱՆ «ՎԵՐԱԾՆՈՒՆԴԻ» ՆԿԱՏՄԱՄԲ

Արեւելասլավոնական եռյակի պառակտումից հետո գերտերություն մնալու ռուսների միակ երաշխիքը կայուն դաշինքն է բյուրֆ-մահմեդական բազմամիլիոն, հզոր տարրի հետ

ՏԻԳՐԱՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
«Հայաստան-Միջին Արեւելք» վերլուծական կենտրոն

Այսօր արդեն ակնհայտ է Հայաստանի հավատարմությունը երրորդ աշխարհի ավանդական ծանապարհին, որը եւ պայմանավորում է նրա ազգային-քաղաքական մտքի զարգացման միտումները: Դժվար է չհամաձայնել այն մտքի հետ, որ պետականության հատկանիշների ձեռք բերումը դեռեւս անկախություն չէ, որ ապազարգացումը դեկլարատիվ փաստաթղթերով չէ, որ իրականացվում է ոչ միջազգային ճանաչմամբ, ոչ նախագահի հրամանագրով կամ նորմատիվ ակտերով հաղթահարել սեփական իրականության սահմանները հնարավոր չէ: Ուստի XX դարում գաղութատիրությունից ազատագրված եզակի ժողովուրդներ են, որ պետականության կառուցմանն ու ազգային իրականության հաստատմանն ուղղված ամենօրյա արդյունավետ աշխատանքով ապացուցել են իրենք իրենց եւ աշխարհին ազատ ու անկախ ապրելու բնական իրավունքի օրինականությունն ու օբյեկտիվությունը: Մնացածները նույն գաղութացված ժողովուրդներն են, ուր օտար իշխանությանն առերեւույթ փոխարինել են ազգային ասպետ ունեցող դեկորացիաները:

Արյունք-արյունով ձեռք բերված ազատության «ուժից վեր լուծը» բարձրելու առաջին ազդակը հասարակայնության, քաղաքական որոշակի շրջանակների կարոտախտն է նախկին վիճակի եւ մետրոպոլիայի նկատմամբ: Սա սեփական պայքարից եւ հատկապես նրա արդյունքներից հուսախաբված զանգվածների խիստ տարասեռ հոգեբանական երջադարձն է, որի հիմքում ընկած է համաշխարհային քաղաքական, տնտեսական եւ գաղափարախոսական տարածության մեջ ազատ, բայց եւ միաժամանակ իրականությունը, դրանով իսկ միայնակ կողմնորոշվելու անկարողության գիտակցությունը: Հզոր ու դաժան կայսրության դեմ հանուն լավագույն ապագայի եւ ազգային պայծառ իդեալների պայքարած ու հաղթանակած ժողովուրդն անզոր է ընդդեմ այն իրականության, որը հաղթանակից հետո հաստատում են հեղափոխության ծնունդ «ազգային իշխանությունները»: Ազգային ու քաղաքական խնդիրներում իշխանությունների անսկզբունքային կոմֆորմիզմին զուգահեռ մարում է հեղափոխության շարժիչ գաղափարը՝ ազգային իդեալը, իսկ լավագույն ապագայի հույսերը փբրվում են հասարակական ծգնաժամի, սոցիալական ծանր իրավիճակի եւ նորաստեղծ պետական կառույցների անձեռնհասության ծանրության տակ: Ժողովուրդն իրեն խաբված է զգում, որովհետեւ երկարատեւ ազգային-ազատագրական պայքարի արդյունքում նա չստացավ ոչինչ, նոր վարչակարգի կողմից մատուցվող զրկանքներից եւ ազգային խնդիրների հանգուցալուծման խիստ եթերային խոստումներից բացի, որոնց նկատմամբ հավատը մարում է համապատասխան իրադարձությունների զարգացման անբարենպաստ ընթացքին: Ամենամեծ հանցանքը, որ գործում են իրենց ժողովուրդների հանդեպ ազգային առաջնորդներ, բացն ու լիարժեք պետականությունն ապահովելու անընդունակ իշխանությունները՝ անկախության գաղափարի վարկաբեկումն է ներկա եւ անմիջական ապագայի սերունդների առջեւ: Որքա՞ն ժամանակ է պետք, որպեսզի ժողովուրդը կրկին հավատա իր ուժերին եւ ազատ ու անկախ ապրելու ծգտումը գերակայի նվազագույն ապահովածության եւ կենցաղային երջանկության բնազդներին:

Դեռ ամիսներ առաջ կանխատեսելի էր, որ նորաստեղծ հայկական պետականության իշխանությունների որդեգրած քաղաքականությունն անհեռանկարային է եւ հղի վտանգներով: Քաղաքական, հասարակական եւ տնտեսական փակուղու պայմաններում բացահայտորեն դրսեւորվել է գաղափարախոսական ծչացող վակուումը, որն արդյունավետորեն լցվում է Ֆաշիզմի հայկական տարբերակից մինչեւ այլադավանություն ու էմիգրացիոն սինդրոմը: Վերջինիս վտանգը դեռ ամբողջովին գիտակցված չէ, թեեւ հայրենիքի զանգվածային լքումը նույնպես ունի իր ուրույն գաղափարախոսական հիմքը: Սակայն, առավել իրատեսական է վակուումի լցումը այն ուժերի կողմից, որոնք լավ ընկալելով ժողովրդական զանգվածների տրամադրությունը, հանդես են գալիս իբրեւ հայ ժողովրդի նախկին կարգավիճակը վերականգնելու ջատագովներ:

Այսօր խորհրդաուսական նախկին իշխանությունը մեծ գորովանքով են հիշում ոչ միայն շարքային քաղաքացիները, այլեւ քաղաքական ազդեցիկ ուժերի ներկայացուցիչները: Հիմնավորումներ որքան ուզեք. ա. հայ ժողովուրդն ուներ ազգային անվտանգության կայուն երաշխիքներ, մտավոր եւ մշակութային զարգացման երաշխավորված հնարավորություններ, տնտեսական համապատասխան կարողություն, որը լրացվելով կենտրոնական մատակարարումներով՝ բավական բարձր կենսամակարդակ էր ապահովում Հայաստանի բնակչության համար, բ. հայերը լիարժեք իրականացրեցին հնարավորություն ունեին աշխարհի մեկ վեցերորդ մասում եւ շատ թե քիչ ընկալում էին այն իբրեւ իրենց հայրենիք, որն էլ որոշակի պարտավորություններ էր կատարում իր հպատակների նկատմամբ: Կարելի է, իհարկե, կուրծք ծեծել եւ ամբոխավարական հայտարարություններով հակաճառել նշված փաստարկների դեմ, բայց դա ապարդյուն զբաղմունք է: Երբ անկախությունը միայն սոցիալական բվառություն է, երբ միջազգային սուբյեկտ դառնալուց հետո նա ազգային անվտանգության տարրական հարցերը լուծվում են ըստ ռուսական վարչակարգի քմահաճույքի, երբ իշխանությունը քաղաքական, տնտեսական եւ գաղափարախոսական իրականության ապահովման հիմքեր չի պատրաստում, ապա ինչն է այն դրականը, հանուն որի ձեռք բերվեց այս գեղեցիկ արտահայտությունը: Ահա այս ամենի վրա հիմնվելով օրեցօր ավելի բարձր են հնչում ռուսական մեծապետության վերածնունդի եւ երջանում նրա կենսական շահերը պաշտպանելու գաղափարները, բոցավառվում է ռուսական գենի վերադարձով Հայաստանի ու ԼՂՀ-ի հայության Ֆիզիկական գոյությունը փրկելու հույսը:

Անկախության ծանր բեռից հոգնած հայ մտավորականները, անզոր ներկա վարչակարգի անճարակությանը որեւէ գործուն այլընտրանք առաջարկելու, կարոտախտ են ապրում ռուսական գերիշխանության, ռուս կանանց բարեհամբուրության, Սիբիրի անծայրածիր խորանի եւ նախկին կյանքի ուրիշ «հրաշալիքների» նկատմամբ: Քաջ գիտակցելով, որ ժողովրդի մեջ այդ տրամադրություններն առկա են, նրանք իրենց դիրքերից վերջացնում են անկախության վարկաբեկման այն ընթացքը, որի սկիզբն իրենց անձեռնհասությամբ ու անզորությամբ դրեցին ազատագրական շարժումն ու ներկայիս վարչակարգը: Ու թեեւ ներքաղաքական պայքարում այս երկու բեւեռները բախվում են իրար, սակայն հակազգային վնասարարության ասպիրանը նրանց մոտ նույնն է: Հանրապետության քաղաքական միտքը մտել է փակուղի եւ ազգային խնդիրների հանգուցալուծման ելքը փնտրում է անդառնալի անցյալի հնոտիների կույտում:

Այդ ո՞ր Ռուսաստանի վերադարձն են բաղձում հայ գործիչները: Եթե խոսքը ելցինյան վարչակարգի մասին է, ապա այն արեւմտյան հուշարարությամբ առավելագույնս շահարկում է «Հայկական հարցը» եւ հայանպաստ որեւէ արտաքին քայլ նրանից ակնկալել հնարավոր չէ: Եթե հույս ունեն, որ Ռուսաստանում ի վերջո կհաղթանակի դեմոկրատական-ռեֆորմիստական շարժումը, ապա ժամանակաշրջանն անհամաչափելի է Ռուսաստանի նման ապագայի հետ: Ուրեմն, մենք սպասում ենք նացիոնալ-պատրիոտների ղեկավարած Ռուսաստանի վերադարձին եւ միամտաբար կարծում, որ դա կծառայի հայ ժողովրդի ազգային շահերին:

Անշուշտ, հայկական գործոնն առավելապես կօգտագործվի ռուսական ծավալապաշտության առաջին փուլում, բայց երբ ծառանա բուրֆական աշխարհի հետ հերթական անգամ փոխըմբռնում ձեռք բերելու խնդիրը, Հայաստանն ու նրա շահերը առանց երկմտանքի կզոհաբերվեն նման ստրատեգիական խնդիրը լուծելու համար: Վերջապես, ի հաշիվ «Հայկական հարցի», ռուս-բուրֆական փոխհամաձայնություններն ամուր ավանդույթներ ունեն եւ ոչ մի երաշխիք չկա, որ այս անգամ բացառություն կլինի: Մի՞թե մեզ չի սթափեցնում այն փաստը, որ Ռուսաստանում մշակվող ազգային գաղափարախոսության հիմքում դրվում են ռուսական ուղղափառության եւ բյուրֆ-մահմեդական ընդհանրության շահերի եւ արժեքների համակարգի համակեցությունը: Մի՞թե հասկանալի չէ, որ արեւելասլավոնական եռյակի պառակտումից հետո գերտերություն մնալու վելիկոռուսների միակ երաշխիքը կայուն դաշինքն է բյուրֆ-մահմեդական բազմամիլիոն, հզոր տարրի հետ: Եւ հուսալ, որ այդպիսի Ռուսաստանը պաշտպանելու է Հայաստանն ու «Հայկական հարցը», ավելին է, քան միամտությունը: Այսպիսով, ռուսական գերիշխանության վերահաստատման շնորհիվ Հայաստանն ու «Հայկական հարցը» փրկելու ծգտող քաղաքական ուժերը գիտակցաբար, սոսկ սեփական քաղաքական ամբիցիան սրողելու համար առաջ են քաշում նախապես դատապարտված մի գաղափար, որը վերջակետ է դնելու մեր պետականության ապագայի վրա:

Հասկանալի է այն մտահոգությունը, որ համակել է հասարակությանը, քաղաքական ուժերին ու առանձին անհատներին: Այն անշուշտ տեղին է եւ արդարացի: Բայց ոչ մեկի իրավունք չի տրված այսօրվա վարչակարգի անկարողությունն ընդունել իբրեւ սպառիչ փաստարկ եւ վճիռ կայացնել անկախության գաղափարի դեմ: Լիարժեք անկախ պետականությունն այն բարձունքն է, որին ծգտել եւ ծգտելու են բոլոր ժողովուրդները, քանի դեռ նրանց մոտ ազգային ինքնագիտակցությունը վերջնականապես չի սպառվել: Եւ պետք չէ ծրագրեր կազմել հերթական ստրկացման գնով Ֆիզիկական գոյությունը պահպանելու ուղղությամբ: Մենք ունենք անկախ պետականություն, որի կայացման համար պատասխանատու ենք եւ ուստի պարտավոր ենք պայքարել բոլորս: ■

digitised by A.R.A.R.@

Ո՞ՐՆ Է ՀԱՂԹԵԼՈՒ. ԹՈՒՐՔԱԿԱՆ ՄԱՀԻ՞ԿԸ, ԹԵ ԽՈՄԵՅՆԻԻ ՊԱՏԳԱՄՆԵՐԸ

Ֆրանսիական «Լը Մոնդը» եւ Լոնդոնի «Քեյհանը» միջինասիական երկրներում ընթացող մրցակցության մասին

Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում ֆրանսիական «Լը Մոնդ» օրաթերթում տպագրված «Նույնիսկ Միջին Ասիայի իսլամականներն են մերժում խոմենիզմը» վերնագրությամբ ընդարկուն հոդվածի ամփոփումը: Հոդվածը հետագայում տպագրվեց է նաեւ Լոնդոնում հրատարակվող Իրանի ընդդիմության «Քեյհան» շաբաթաթերթում: Հոդվածագիրն, ամենայն մանրամասնությամբ վերլուծելով Միջին Ասիայի մուսուլմանական հանրապետությունների քաղաքական-տնտեսական իրավիճակը, աշխատում է ներկայացնել այդ շրջանում «ռուսական արջին» փոխարինողին: Սակայն Սոֆի Շահաբը՝ հոդվածի հեղինակը, եթե ուշադրությամբ հետեւեր նաեւ Անդրկովկասում տեղի ունեցող իրադարձությունների ընթացքին (քանի որ դրանք շատ հաճախ փոխկապակցված են), շատ հարցեր նրա համար պարզ կդառնային, այդ թվում նաեւ այն, որ Ռուսաստանը բոլորովին էլ մտադիր չէ Միջին Ասիայում իր տեղը զիջել որեւէ մեկին: Ինչպես շատ դիպուկ նշել է Լոնդոնում հրատարակվող *«Ինդիփենդընթ»* օրաթերթը, *«Ռուսներն առայժմ համակ ուշադրությամբ հետեւում են Իրանի եւ Թուրքիայի մրցակցությանը եւ նրանց բանկերի ներդրումների նշանակությանը Թուրքմենստանում»:* Ներկայումս Միջին Ասիայի «մեծ խաղում» (որի մասին խոսում է Սոֆի Շահաբը) նման կեցվածք ընդունելու համար Ռուսաստանը խաղատախտակի վրա «փոքր ֆիգուր» է զոհաբերել հանուն իր շահերի Անդրկովկասում եւ ռուս-թուրք-ամերիկյան դաշինքի ամրապնդման: Այդ են վկայում Մոսկվայում կայացած ասուլիսի ժամանակ ԱՊՀ զինված ուժերի գլխավոր հրամանատար Շապոշնիկովի հայտարարությունը Ղարաբաղի հարցի վերաբերյալ, ինչպես նաեւ ադրբեջանական եւ ռուս պաշտոնյաների արտահայտությունները, Տաշքենդի համաժողովի արդյունքները: Իհարկե, հետագայում վաղ թե ուշ Ռուսաստանը կանդրադառնա իր զիջած «ֆիգուրին», բայց վերականգնելու համար թերեւս արդեն ուշ կլինի: Ցավալին այն է, որ կարծես մենք էլ համակերպվում ենք ուրիշների ձեռքով տնօրինված մեր ճակատագրին:

*«Վաշինգտոն Թայմս»*ի խոսքերով, *«Իրանը մի պետություն է, որը Հայաստանի հարեւաններից առավել անկեղծ վերաբերմունք է ցուցաբերում նրա հանդեպ»:* Տրամաբանությունը պահանջում է, որ այս ծանր իրավիճակից դուրս գալու համար առավելագույնս օգտվենք նման վերաբերմունքից: Սակայն գործնականում ոչ մի աշխուժություն չի նկատվում երկու երկրների փոխհարաբերություններում: Դեռ ավելին, նույնիսկ որոշակի արդյունքների չհասած, արդեն խոսվում է համատեղ ձեռնարկությունների փակման մասին: Այնինչ, չնայած Աբուլֆազ Էլչիբեյի հակահրանական ելույթներից հետո երկու երկրների փոխհարաբերությունները քաղաքական ասպարեզում զգալիորեն սառեցին, տնտեսական փոխհարաբերությունները շարունակում են զարգանալ: Հուլիսի 16-ին Ադրբեջանի արտաքին տնտեսական հարաբերությունների նախարարը հանդիպելով Ադրբեջանում Իրանի դեսպանին, գոհունակություն է արտահայտել երկու երկրների միջեւ տնտեսական փոխհարաբերությունների հաջող ընթացքի առթիվ, շնորհակալություն հայտնել Իրանի կողմից Նախիջեւանին հատկացված 50 միլիոն դոլար վարկի եւ Բաքվում իրանական բանկերից մեկի մասնաճյուղը բացելու կապակցությամբ: Ռուսաստանի քաղաքականության հետեւանքներից մեկը կարելի է համարել նաեւ Իրանի միջնորդական դերի չեզոքացումը, մի բան, որի իրականացման համար Թուրքիան ոչ մի ջանք չէր խնայում, համոզված լինելով, որ Ղարաբաղի հիմնահարցը ԵԱՀԽ տեղափոխելուց կշահեն Թուրքիան եւ Ադրբեջանը:

ԷՄՄԱ ԲԵԳԻՋԱՆՅԱՆ

ԽՍՀՄ «մահից» 6-7 ամիս անց դեռեւս մի հարց անպատասխան է մնացել՝ ով ոմի գրավի «ռուսական արջի» տեղը նախկին խորհրդային 6 մուսուլմանական հանրապետություններում: Եւ ով կլցնի Չինաստանի սահմաններից մինչեւ Միջին Արեւելք առաջացած ռազմավարական վիթխարի վակուումը: Թուրքմենստանը Միջին Ասիայի միակ հանրապետությունն է, որը սահմանակից է Իրանին: Թուրքիայի եւ Իրանի այդ երկու վաղեմի ախոյանների միջեւ խիստ մրցակցություն է գնում: Աշխարհում գործող թուրքական խանութում առեւտուրը կատարվում է դոլլարով, հաճախորդները հատուկենս արտնյալ մարդիկ են: Քաղաքում բացվել է նաեւ իրանական խանութ, որ առեւտուրը կատարվում է՝ ռուբլիով եւ ադրանքները 30 տոկոսով ավելի էժան են մյուս խանութների համեմատությամբ: Այստեղ միշտ էլ երկար հերթեր են գոյանում: Առայժմ երկու պետությունների մրցակցությունը սահմանափակվում է Աշխարհի խորհրդարանի մայրերի հաճախորդներին իրենց կողմը գրավելով: Առայժմ հազիվ թե բոցավառվի դարակզբի «մեծ խաղի» կրակը, որը սկսել էին անգլիական լեռները, ռուսական ժողովրդական կոմիսարները եւ մուսուլման միսիոները *«կայսրության փակ շրջանակներում»:* Թուրքմենստանի նախագահի-նստավայրի միջանցքներում միաժամանակ իրանցի, թուրք, իտալացի, ամերիկացի, արգենտինացի գործարար մարդիկ թուրքմեն պաշտոնյաների հետ գաղտնի «բանակցություններ» են վարում: Նախագահի խորհրդական Նազար Սուլյունովը դարակից ծալած մի քարտեզ է հանում, արագ բացում եւ անմիջապես փակում այնպես, որ մարդ հազիվ է նշմարում կարմիր գույնով նշված գազամուղները:

Հիրավի, Միջին Ասիայում վերսկսված «մեծ խաղը», որի մասին երազում են, նախ եւ առաջ կազմված է նավթատարների եւ գազամուղների հետ: Կան մարդիկ, որ ցանկանում են իրենց երկրի ընդերքի հարստությունը դուրս հանել խորհրդային նավթատարների ցանցից, պատճառաբանելով, թե իրենց նավթը «գողորշանում» է այդ խողովակներում: Միջին Ասիայի երկրները, որոնց տնտեսությունը գաղութային է, իրենց նավթի եւ գազի կողքին առաջ քաշելով բամբակի եւ տարբեր հանքային հարստությունների հարցը, օտարերկրյա ներկայացուցիչներին առաջարկում են հնարավորությունների ցուցակը՝ ապացուցել, որ հեռանկարում նրանք գործ կունենան «նոր Քուվեյթի» հետ: Քանզի իրականում շատ քչերը կհամարձակվեն Միջին Ասիայում կապիտալ ներդրումներ կատարելով փրկել նրանց Ռուսաստանի «սեւ խորից»:

Թուրքմենստանն այս առումով լավագույն օրինակն է: Տարածությունը Ֆրանսիայի չափ է, բնակչությունը՝ մոտ 3,5 միլիոն, իսկ գազի արտադրությամբ աշխարհում առաջին տեղը գրավելով հանդերձ, իրականում օգտագործում է դրա չընչին մասը: Մնացածը կերակրում է Ռուսաստանին: Թուսունովն ասում է, թե երկու ամսվա ընթացքում հայտնի կլինեն Թուրքմենստան-Իրան-Թուրքիա-Եւրոպա նոր գազատարի կառուցման ամորդի տվյալները: Այս նախագիծն ինքնըստինքյան տնտեսական տեսակետից շատ հետաքրքիր է, մանավանդ, եթե գազատարին զուգահեռ անցկացվի նավթատար, Թուրքմենստանից հյուսիս գտնվող երկու մեծ երկրների՝ Ղազախստանի եւ Ուզբեկստանի նավթը կտեղափոխվի Եւրոպա: Ղազախստանն արդեն Ֆրանսիական «ԱՅԲ» եւ ամերիկյան «Շեւրոն» ընկերություններ հետ պայմանագիր է ստորագրել նավթի արտահանության եւ շահագործման վերաբերյալ:

Այստեղ հարց, ո՞վ կհամարձակվի կապիտալ ներդնել այնպիսի արկածախնդրության մեջ, որը կարագացնի Ռուսաստանի անկումը: Բացի դրանից, միաժամանակ պետք չէ վստահել Թեհրան-Անկարա հարաբերություններին: Չնայած, նրանք սկզբունքորեն ընդունել են Թուրքմենստանի կողմից առաջարկված գազատարի ուղղությունը, սակայն դա չի խանգարում, որ նրանցից իուրաքանչյուրն ունենա իր նախագիծը: Իրանը ցանկանում է նավթը եւ գազը ամբողջությամբ բերել դեպի հարավ՝ Պարսից Ծոց եւ մի ճյուղով էլ դեպի Հայաստան: Մինչդեռ, թուրքերը ցանկանում են նավթատարը Կասպից ծովով հասցնել իրենց հավատարիմ դաշնակցին՝ Ադրբեջանին, այնտեղից էլ իրենց ափերը եւ այսպիսով թույլ չտալ, որ նավթատարներն անցնեն Իրանով:

Պրն. Թուսունովը, որը շատ ավելի իրանամետ է, գտնում է, որ Թուրքիայի նախագիծը երբեք չի իրագործվի, որովհետեւ Կովկասի կոիվները կշարունակվեն երկար տարիներ: Թուրքմենստանի մտադրությունը գրում է չորրորդ գծի մասին, որը կծգվի Թուրքմենստանից դեպի Իրան, այնտեղից էլ՝ Պակիստանով դեպի ասիական շուկա, որը գնալով ընդարձակվում է: Մյուս կողմից, նոր «մեսաֆսի» ճանապարհի նկատմամբ անտարբեր չեն Պակիստանը, Չինաստանը, Հնդկաստանը եւ Կորեան: Մանավանդ որ Ղրղզստանը եւ Ղազախստանն ավելի շատ հակված են դեպի ասիական երկրները, քան Թուրքիան: Նշենք նաեւ, որ այստեղ տարածված թուրքերենն իրականում անհասկանալի է Ստամբուլի թուրքերին:

Մայիսի սկզբներին ատարեզ եկավ նաեւ Ճապոնիան, իր արտգործնախարարի այցելությամբ այդ երկրներ. ճապոնացիները պահանջում էին, որ Միջին Ասիայի երկրները որոշեն դիտորդ մասնակցեն Հոկոնոգում Ասիայի զարգացման բանկի համաժողովի նիստերին: Վերջապես այս մրցակցության մեջ ո՞վ է հաղթելու Ասիան, Եւրոպան, թուրքալեզու աշխարհը, թե՞ իսլամական աշխարհը: Իհարկե, ասիական կապիտալը եւ նրա «մոդելը» արջանի ղեկավարների ճաշակին ավելի մոտ են, քանզի նրանք նույն կոմունիստներն են, որ իրենց հագուստը փոխել են ազգայնական բիկնոցով եւ ժողովրդավարության նկատմամբ էլ հատուկ սեր չեն տածում: Եւրոպան, որ մշտապես բարոյագիտական դասեր է տալիս, շատ հեռու եւ սահմանափակ է թվում, թույլ՝ իր շարժունակությամբ: Իսկ Միջին Ասիայի երկրներն արդեն զգացել են, որ չնայած Թուրքիան մեծ ցանկություն ունի իրենց օգնելու, բայց նրա հնարավորությունները չեն հերում: Նրա կողմից 2 միլիարդ դոլլար վարկի հատկացումը Միջին Ասիայի բոլոր երկրներին նվիրաբերություն չէ: Այն հատկապես ուղղված է Իրանի արտասահմանյան առաջին առնելու: Միջին Ասիա հեռարձակվող Թուրքիայի հեռուստատեսային ծրագրերը հենց այդ նպատակին են ծառայում: Եւ Թուրքիան իր «մոտաքոչ որդիների» վրա է հույսը դրել: Չնայած Իրանի մշակութային ազդեցությանը Տաջիկստանում եւ Թուրքմենստանում, Միջին Ասիայում տիրող իսլամականությունը Իրանի շիիզմը չէ, այլ տեղական իսլամը, որ բոլշեւիկների դեմ պայքարում շարժիչ ուժ էր համարվում:

Այնուամենայնիվ, իսլամը դաշնակների եւ դաղրզների համար երբեք կարեւոր դեր չի կատարել: Հիմնականում Ուզբեկստանում եւ Տաջիկստանում իսլամական շարժումը կարող է վտանգավոր դառնալ, հատկապես Ուզբեկստանում, որի «Իսլամի կամավորներ» կազմակերպությունը պայքարի է պատրաստվում ընդդեմ երկրի ղեկավարների: Թերեւս հենց Աֆղանստանից սկիզբ առած ալիքի ուժգնացման վտանգից խուսափելու ցանկությամբ էր, որ Միջին Ասիայի երկրների ղեկավարներն ստիպված էին մեկը մյուսի հետեւից Ռուսաստանի հետ պայմանագիր կնքել՝ հավի չառնելով ժողովրդի բուռն հակառուսական տրամադրությունները: Սակայն, հարց է, թե որքանով կհաջողվի ռուս զորքերին տեղական զինվորներից կազմված բանակով պաշտպանել այդ երկրների ղեկավարներին: Անկախ այն պնդումներից, թե ռուսական զորքերի ներկայությունը շրջանում ժամանակավոր է, պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնել նրան, որ բավական մեծ ռուսական գաղութը՝ Ղազախստանի 18 միլիոնանոց բնակչության կեսը եւ 2 միլիոնից ավելի այլ հանրապետություններում, կարեւոր դեր է խաղալու այդ երկրներում:

Այստեղ միայն մեկ հարց է անվիճելի թվում այս երկրներն իրենց անկախությունն ամրապնդելու համար անհրաժեշտ հնարավորություն չունեն: Նրանց ներքին բազմաթիվ դժվարություններն ու խնդիրները կարճ ժամկետում «Մեծ Թուրքեստան» ստեղծելու հնարավորություն չեն ընձեռում, չնայած Ղազախստանի եւ հատկապես Ուզբեկստանի ընդդիմադիր կուսակցությունները երազում են այդ մասին: Ըստ երեւույթին, շրջանի ճակատագիրը մեծ մասամբ կորոշեն տնտեսական զարգացման նախաձեռնողները: Արդյոք ո՞ր երկրին է հաջողվելու իր կապիտալները «Շեւրոն» ամերիկյան նավթային ընկերությունը, արդյոք Թուրքիայի հեռուստատեսությունը հաջողություն կունենա՞ եւ ի՞նչ ճակատագրի-կարժանանա երբեւ սիրվող դատգամը: Սա ինքնըստինքյան բարդ հարց է, քանի որ այդ երկրում վերջին ընտրությունների ժամանակ իսլամականները ձեռք են բերել ձայների 12 տոկոսը: Իսկ վերջերս կատարված հասարակական կարծիքի հարցման ընթացքում կառավարության հակառակորդների 51 տոկոսը եւ նրա կողմնակիցների 38 տոկոսը պահանջել են, որ Թուրքիան Ադրբեջանին պաշտպանելու նպատակով ռազմական միջամտության դիմի: Համենայն դեպս, մի երկրի համար, որին Արեւմուտքը օգնում է Միջին Ասիայի գաղտիարախտասական ոլորտը գրավելու համար, այս թվերը բավականին բարձր են: ■

Հատուկ ծառայություններն իրար դեմ չեն գործելու

Երկուշաբթի օրը Կիեւ ժամանեց Ռուսաստանի անվտանգության նախարարության պատվիրակությունը նախարար, բանակի գեներալ Վիկտոր Բարանիկովի գլխավորությամբ: Ուկրաինայի անվտանգության ծառայության նախագահ Սաչուկը եւ Վ. Բարանիկովը հուլիսի 21-ին համաձայնագիր ստորագրեցին համագործակցության եւ իրենց ծառայությունների փոխհարաբերության վերաբերյալ: Փաստաթղթով արգելվում է երկու երկրների գաղտնի ծառայությունների գործունեությունը միմյանց դեմ, նախատեսվում է միասնական պայքար միջազգային ահաբեկչության, հետախուզության, թմրադեղերի առեւտրի, կազմակերպված հանցագործությունների դեմ, միջուկային օբյեկտների պահպանության, տեղեկատվական-վերլուծական լուրերի փոխանակության եւ այլն: ■

Բելառուսը զենք է վաճառում

Բելառուսի պաշտպանության նախարարությունում ստեղծվել է ռազմական տեխնիկա եւ զենք վաճառելու առեւտրական կենտրոն: Այն ղեկավարում է գեներալ-մայոր Միխայիլ Գեցը: «ԻՖ»-ին տված հարցազրույցում Մ. Գեցը հայտնեց, թե Բելառուսի պաշտպանության նախարարությունը վաճառի համար առաջարկում է մոտ 200 անուն ազատված ռազմատեխնիկական միջոցներ եւ զենք, մասնավորապես ՍԱՀ-537 մեքենաներ, ԱՖ-5,5/375 ավտոցիստեռներներ «Ուրալ» մեքենայի համար, շարժական վերանորոգման արհեստանոցներ, շարժական խոհանոցներ, պաշտպանական հագուստներ: Մ. Գեցի խոսքերով, հանրապետության պաշտպանության նախարարությունը ռազմական զենքի վաճառից ստացել է 100 միլիոն ռուբլի: Նա նաեւ ընդգծեց, որ չի բացառվում Բելառուսի սահմաններից դուրս վաճառը: *«Սակայն այդ դեպքում անհրաժեշտ է հանրապետության կառավարության թույլտվությունը»,* ընդգծեց Մ. Գեցը: ■

Ա. Ակաեւ. Եւրոպա կամ իսլամ

«Եթե Եւրոպան մեր տնտեսական վերափոխման ծրագրերի իրականացմանը աջակցի, ապա կարելի է վստահ լինել, որ Ղրղզստանը կգնա զարգացման բաղմակիրթ ուղով: Հակառակ դեպքում մենք անխուսափելիորեն կհայտնվենք իսլամական արմատականության ազդեցության տակ», հայտարարեց հանրապետության նախագահ Ասկար Ակաեւը, ընդունելով Միջազգային Միության պատվիրակությանը: Պատվիրակությունը հայտարարեց այն հնարավորության մասին, որ մոտ ժամանակներս Ղրղզստանին խոշոր վարկ կհատկացվի: ■

Պրիդնեստրովիե. կայունության ճիգեր

Մինչեւ այս շաբաթվա վերջը Մոլդովայի արեւելյան շրջաններում կգործարկվի հակամարտության դադարեցման մեխանիզմը: Այս մասին երեքշաբթի օրը հայտարարել է նախագահ Միրչա Սնեգուրը: Նա հայտնել է նաեւ, թե Բենդերում գտնվող ռուս-մոլդովական փորձագետների խումբը կուսումնասիրի իրադրությունը՝ փորձելով պարզել, թե որն է խաղաղում իրավիճակն աղավաղունացնող «երրորդ ուժը»: ■

Դադարել է գնացքների երթեւեկությունը

Նորից դադարել է գնացքների երթեւեկությունը Արեւմտյան Վրաստանում, որտեղ վերջին շրջանում գինված ավազակախմբերը պարբերաբար թալանում են շարժակազմերը: Այդ մասին երեքշաբթի օրը Թբիլիսիում հայտնել է ներքին գործերի նախարարի տեղակալ Թենգիզ Էմիտաշվիլին: Նրա խոսքերով, այժմ երկաթգծերի լիարժեք պահպանության համար անհրաժեշտ են առնվազն 22 հազար լավ պատրաստված ոստիկաններ, այն դեպքում, երբ այժմ նրանց թիվն ընդամենը մեկուկես հազար է: ■

digitised by A.R.A.R.@

Ամեն տեսակի հարմարություններ օդում

Միջմայրցամաքային հաջորդ սերնդի օդանավերի 600-800 ուղեւորներն իրենց կզգան ոչ պակաս հարմարավետ, քան ծովայիններում

Երկարաչափ թռիչքներ կատարող բազմաթիվ ավիաուղեւորների երազանքը շուտով կիրականանա, շարք կմնա մի օդանավ, որում հնարավոր կլինի ոտքերը «երկարել», ուղեւորն էլ «կաղված» չի մնա իր տեղին, որ նա ճաշում է, քնում եւ դիտում բոլորի համար պարտադիր շարժանկարներ, գրում է գերմանական *«Վեյս»* թերթը: 30 տարի առաջ ստեղծված «Բոինգ-747»ը իր տեղը զիջում է ինքնաթիռների նոր սերնդին: Ուղեւորը կթռչի արդեն ոչ «խողովակի» մեջ՝ ինքնաթիռը փոխակերպվում է եռահարկանի «թռչող հյուրանոցի»:

«Բրիթիշ էյրուէյզ» ավիաընկերությունը մշակել է հաջորդ սերնդի ինքնաթիռների մոդելը եւ 10 հոգուց բաղկացած փորձագետներին հանձնարարել է մոտակա մեկուկես տարում նախադատրաստել նոր լայնակմախք ինքնաթիռի մանրամասն տեխնիկական առաջադրանք, որն այնուհետեւ կհանձնվի ավիաշինարարներին: Ինչպես հաղորդեց այդ ընկերության գլխավոր վարիչ Ռոդ Մաղլին, ընկերությունն արդեն կապ է հաստատել Սիեթլում *«Բոինգ»*, Սենտ-Լուիսում *«Մակդոնել-Դուգլաս»* ֆիրմաների եւ *«Աերոբուս»* կոնսորցիումի հետ: Ինքնաթիռները կսկսեն թռչել 1998 թվականին: Մաղլին գտնում է, որ «Բոինգ-747»ի երեւան գալուց հետո որեւէ սկզբունքային կատարելագործում տեղի չի ունեցել: «Բրիթիշ Էյրուէյզ»ը մտադիր է մեծ թռիչք կատարել դեպի ավիատեխնիկայի հաջորդ դարը:

Նախատեսվում է 377 տեղանոց «Բոինգ-747»ը փոխարինել մի ինքնաթիռով, որը կարող է վերցնել 600-800 ուղեւոր: Ինքնաթիռը, սակայն, անդրմայրցամաքային գծերը սպասարկող օդանավակայանների համար չպետք է լինի մեծածավալ: Նա պետք է լինի նվազ աղմկոտ, քան նրա նախորդները, թռչի ավելի արագ եւ ավելի բարձր, ցնցեսի վառելիք եւ առանց լիցքավորման թռչի 14 ժամ: Այդ հսկա օդանավի թռիչքի ինքնարժեքը համեմատած այժմյանի հետ կկրճատվի 20 տոկոսով: Լոնդոնից Սինգապուր կամ Լոս Անջելես թռչելու ընթացքում ուղեւորն էլ չի վախենա մեջքացավերից, արյան շրջանառության խախտումից կամ ոտքերի թմրությունից: Նա կարող է նույնիսկ հատուկ մարզադահլիճում զբաղվել ֆիզիկական վարժություններով:

Ինքնաթիռը եռահարկ կլինի: Առաջին հարկում առաջվա պես կմնան հարմարավետ բազկաթոռները, առանց որոնց անհնարին է վերելքը եւ վայրէջքը: Ավելի հարմար կարելի է տեղավորվել միջին հարկում: Այստեղ ուղեւորը կարող է ինքը վերցնել իր ճաշը ինքնասպասարկման ճաշարանում: Ծարավը կարելի կլինի հագեցնել ավտոմատ խմիչքաստարի միջոցով, իսկ հանգստանալ բազկաթոռի կամ բազմոցի վրա: Գուցե տեղ գտնվի նաեւ ննջասենյակների համար: Եթե այժմ կերակուրը վերնահարկ է բարձրանում վերելակի միջոցով, ապա մոտ ապագայում ուղեւորն ինքը վերելակով կիջնի մարզադահլիճ, բիզնես-կենտրոն, որտեղ կկահավորվեն հեռախոսներով եւ կոմպյուտերներով: Արբանյակային կապի միջոցով բիզնես-կենտրոնը կապ կստեղծի միջազգային կենտրոնների հետ: Ներքին հարկում կցուցադրվեն ֆիլմեր:

Հսկայական ինքնաթիռը ստեղծվում է ոչ միայն ուղեւորների հարմարության համար: Օդային հաղորդակցությունների ընդլայնումը ավիաընկերություններին ստիպում է վերանայել իրենց ռազմավարությունը:

Մի ուրիշ նորույթ, որի մասին գրում է գերմանական *«Ֆրանկֆուրտեր ալգեմանե ցայտունգ»* թերթը: Ինչպես հայտնեց *«Լյուֆտհանզա»* ավիաընկերության ներկայացուցիչը, նրա հաճախորդներին Եւրոպայի երկնքում սպասում է հաճելի անակնկալ: Դառնալով «Բոինգ-737»-ի ուղեւոր, նրանք կարող են երկնքից հեռախոսով կապվել երկրագնդի ցանկացած կետի հետ: Ինքնաթիռի սրահները հագեցված են արբանյակային հեռախոսային կապով, ընդ որում հեռախոսասարքը թռիչքից հոգնած հաճախորդի ցանկությամբ կարող է մատուցվել անմիջապես նրա բազկաթոռին:

Ծառայությունը կնստի բավականին էժան՝ երկնքից խոսակցության մեկ րոպեն, անկախ վայրից, կարժենա 10 դոլար, ընդ որում կարելի է վճարել ոչ միայն կանխիկ, այլ նաեւ վարկաքարտերով: Զգալով սպասարկումը կազմակերպել բարձր մակարդակով, *«Լյուֆտհանզա»*ն փորձում է նախապես ստանալ ավիաուղեւորների աջակցությունը: Վերջին ամիսներին ընկերության ինքնաթիռներում առաջարկում են լրացնել հարցաթերթիկներ, որոնցից վերջնականապես կողմնորոշվի ինքնաթիռում հեռախոսի լինել թե չլինելը: ■

Հանդիպում Լեւոն Ժամկոչյանի հետ

Հուլիսի 21-ին «Գիտելիք» ընկերության ցուցասրահում ամերիկահայ նկարիչ Լեւոն Ժամկոչյանի եւ հասցոցային գրաֆիկայի նրա անցկացրած սեմինար դասընթացների մասնակիցների հետ կայացավ մամուլի ասուլիս: Բացման խոսք ասաց «Գիտելիք» ընկերության ցուցասրահի տնօրեն Է. Մարտիրոսը: Հետո լրագրողների հարցերին պատասխանեց ինքը՝ Լեւոն Ժամկոչյանը: Հարցերին տրված պատասխաններից հայտնի դարձավ, որ ցուցժեսնդեսը մարտից հունիս ամիսների ընթացքում Լ. Ժամկոչյանի կազմակերպած սեմինար դասընթացների արդյունքն է: Ցուցահանդեսի հովանավորներն են Հայկոր Մեղադարտի անվան պոլիգրաֆիական միավորումը եւ «Գիտելիք» ընկերության բանգարան-լեկտորիումը: Ցուցահանդեսն իր բնույթով բարեգործական է. ստացված եկամտի 70 տոկոսը կհատկացվի Արցախի տուժած ընտանիքներին, Գյումրիի միջազգային գրաֆիկայի կենտրոնին, «Գիտելիք» ընկերության բանգարանին, իսկ 30 տոկոսը՝ ցուցահանդեսի մասնակիցներին: Տեղեկացվեց նաեւ, որ մասնակիցներից շատերը Երեւանի գեղարվեստաբեմական ինստիտուտի ուսանողներ են, մյուսները՝ Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանի ուսանողներ, երեքը՝ Մխիթար Սեբաստացու անվան կրթօջախի ուսուցիչներ: Սեմինար դասընթացները անց են կացվել Մխիթար Սեբաստացու անվան կրթական օջախում, այստեղ կան երկու հասցոցներ, որոնց օգնությամբ էլ փորձառու հեծացել եւ աղյուսավոր են դարձել դարաստմունները: Լ. Ժամկոչյանն ավելացրեց նաեւ, որ չնայած Հայաստանում գոյություն ունեն հասցոցային գրաֆիկային ոլորտի հասցոցներ, սակայն դրանք ինչ-ինչ դասաճառներով իրենց նպատակին չեն ծառայում:

Իսկ երեկ, «Գիտելիք» ընկերության ցուցասրահում (Աբովյան փողոց 12) հանդիսավորությամբ բացվեց բարեգործական ցուցահանդեսվաճառքը: Նկարիչները ցուցադրեցին 181 ռելիեֆ, սրենսիլ, ռելիեֆոլ, մոնոտիպ, գամ-բայրոնեյք տեխնիկաներով եւ ինքնուրույն ոճով կատարված աշխատանքներ: Արվեստասերները դեպք է օգտվեն այս բացառիկ հնարավորությունից: Նրանք գնելով եւ հարստացնելով իրենց հավաքածուները, կնպաստեն Հայաստանի կրթական եւ մշակութային կյանքի վերելքին:

ԳԱՅԱՆԵ ԻՍՊԻՐՅԱՆ

Հելմուտ Քոլին անհրաժեշտ է նոր «Մերսեդես»

Գերմանիայի կանցլեր Հելմուտ Քոլի համար որոշեցին գնել նոր ավտոմեքենա: Դե, իհարկե, ինչպես վայել է կառավարության ղեկավարին, այն պետք է լինի ամենավերջին նմուշի «Մերսեդես-500»: Սակայն հենց դաշնակցային կանցլերի գերատեսչության այդ մտադրությունը բավականաչափ մամուլի էջերը, հասարակության մեջ ծավալվեց բուռն բանավեճ. մի հիշ բանկ չի՞ նստի այդ նորույթը եւ արդյոք խելացիորե՞ն են ծախսվում հարկ վճարողների փողերը: Եւ կառավարական գերատեսչությունը անմիջապես սկսեց հասարակությանը բացատրել գնման նպատակահարմարությունը:

Դեռ անցյալ տարի, երբ երկրում ձեւավորվում էր պետական բյուջեն, դաշնակցային կանցլերի գերատեսչությունը խորհրդարանի համապատասխան հանձնաժողովին դիմեց մի խնդրանքով, որ միջոցներ հատկացվի ավտոմեքենայի համար: Բոլոր տեսակի կանոնները պահպանելով՝ դրամը հատկացվեց եւ այնքան էլ հիշ չէր՝ 480 հազար մարկ, ներառյալ այն գեղչը, որը «Մերսեդես» ֆիրման կարող է տալ իրեն հետաքրքրող հաճախորդին: Մի խոսքով, կանցլերի նոր մեքենան «կնստեր» 650 հազար մարկ: Բայց ինչո՞ւ են փոխում ավտոմեքենան: Դժվար թե կանցլերը ման է գալիս պահածոյի տուփով: Իհարկե ոչ, բայց եւ նոր էլ չես կարող անվանել նրա լիմուզինը՝ արագաչափը ցույց է տալիս 456 հազար կիլոմետր: Ուստի կարելի է եւ նորը գնել...

«Մերսեդես-500»ը մոխրագույն, զրահապատ մեքենա է: Ունի էլեկտրոնային ներարկմամբ 8 գլանանոց շարժիչ՝ 326 ձիաուժ հզորությամբ: Ունի «տեմպոմատ» սարքավորում, որը թույլ է տալիս հետեւել արագությանը՝ Գերմանիայում կանցլերն էլ իրավունք չունի խախտել ճանապարհային կանոնները: «Մերսեդեսը» ունի օդի մաքրման լրացուցիչ ֆիլտր: Արտաքին աշխարհի հետ կապը իրականացվում է ծածկագրված հեռախոսով (նրան հնարավոր չէ քաքուն ականջ դնել): Ի դեպ, հեռախոսը ունի բավականին հարուստ «հիշողություն» «մտքում» պահում է 100 համար: Որոշեցի կապվի անհրաժեշտ բաժանորդի հետ, կանցլերին բավական է արտասանել ցանկացած անունը եւ աղարտը ինքը կմիանա, ում հետ հարկավոր է: ■

Սպորտը գովազդի լավագույն միջոցն է

Հայտնի բան է՝ որ գովազդն առեւտրի շարժիչն է, իրական շուկայական տնտեսություն ունեցող հասարակության՝ կյանքի հիմքը: Իսկ գովազդի տարածման թերեւս ամենաարդյունավետ միջոցը հեռուստատեսությունն է: Այդ՝ իսկ պատճառով ցանկացած ընկերության, ֆիրմայի համար կենտրոնական նշանակություն ունի եթերային ժամանակի գնումը որոշակի հեռուստահաղորդումների ժամանակահատվածում: Բայց ինչպե՞ս գայթակղել, իր վրա բեւեռել ողջ աշխարհի բազմամիլիոն հնարավոր գնորդ հեռուստադիտողների ուշադրությունը:

Աշխարհի ուժեղների համար պատասխանը մեկն է՝ դառնալ միջազգային նշանակություն ունեցող սպորտային միջոցառման հովանավոր: Իսկ ամենագանգվածային սպորտային միջոցառումներն օլիմպիադաներն են եւ ֆուտբոլի աշխարհի ու եւրոպայի առաջնությունները: Ինչ վերաբերում է վերջերս Շվեդիայում անցկացված ֆուտբոլի եւրոպայի առաջնությանը, ապա միայն նախնական տվյալներով, այն հեռատացույցների մոտ էր հավաքելու 3,9 մլրդ մարդ 139 երկրներից:

Մարզական միջոցառումների հովանավոր «Canon» ֆիրմայի պատասխանատու Ռիչարդ Դենթոնն ասում է. *«Մեզ նման հանրաշխարհային ընդգրկման ընկերություններին սպորտը տալիս է բացառիկ հնարավորություն գովազդելու մեզ եւ մեր արտադրանքը: Չէ՞ որ սպորտում չկան ոչ մշակութային սահմաններ, ոչ էլ լեզվական խոչընդոտներ»:*

Ըստ մարկետինգային «ESL» ֆիրմայի առեւտրային հարցերով տնօրեն Թոմ Լիսոնի, *«եթերային ժամանակի ձեռքբերումը 30 վայրկյան տեւողությամբ գովազդի համար բոլոր երկրներում, որտեղ դիտում են առաջնությունը, գովազդատուի վրա մի քանի հարյուր անգամ ավելի քանկ կնստի: Իսկ որոշ դեպքերում դա ուղղակի անհնար կլինի, քանի որ որոշ երկրներում, ուր պետությունն է հեռուստատեսության սեփականատերը, հեռուստագովազդներն արգելված են»:*

Շատերի համար ֆուտբոլի եւրոպայի առաջնությունը նաեւ հիանալի միջոց է իր ծառայողներին, հաճախորդներին ու պատվիրակներին երախտագիտություն հայտնելու համար: Օրինակ, «Carlsberg» ֆիրման իր հաշվին «եւրո-92»-ին հրավիրել է մասնակցելու համանուն գարեջրի ամենաակտիվ տարածողներին, դրանով իր գործընկերների վրա թողնելով անանխադեպ տպավորություն:

Մարզական միջոցառումների առեւտրական ցուցանիշը կարելի է համարել այսպես կոչված առեւտրական պիտակի հասարակության կողմից ճանաչելիության գործակիցը: Օրինակ, 1988 թ. եւրոպայի առաջնության ժամանակ, ըստ հեռատացությունների արդյունքների, այդ գործակիցն աճել է ավելի քան 2 անգամ: Առաջնությունը տնօրինող Գերմանիայում այդ գործակիցը 21 տոկոսից հասավ 51-ի, այսինքն՝ այն ընկերությունները, որ նշանակեց էին վերցրել առաջնությունը, դիտողուկ գտնվեցին:

Չնայած ֆուտբոլային դաշտի դարագիծը գովազդի համար ամենացայտուն տեղն է, առաջնության հանդեպ հովանավորների հետաքրքրությունը դրանով չի սահմանափակվում: Բացի եզրագծի մոտ իր գովազդի վահանակը տեղադրելուց, նրանք առաջնության կազմակերպիչներին անվճար առաջարկում են իրենց արտադրանքը կամ ծառայությունները: Օրինակ, «Saab» ֆիրման, որը *«Ջեներալ Մոթորս»*-ի մասնաճյուղային ձեռնարկությունն է Շվեդիայում, կազմկոմիտեին տրամադրել է իր արտադրության 100 ավտոմոբիլ: «Phillips electronics»ը «եւրո-92»-ի գլխավոր հովանավորներից մեկն առաջնությանն է տրամադրել ոչ միայն լուսատեխնիկական համալիրներ մարզադաշտերի համար, այլեւ ամենաբարձր մակարդակի հաշվիչ տեսատախտակներում մամուլի կենտրոնի եւ լրատվական ծառայությունների համար, որոնք լուսաբանելու են առաջնությունը: «Canon»ը, որը սկսած 1980 թ.-ից եւրոպական առաջնությունների մշտական հովանավորներից է, նույնպես տրամադրել է իր արտադրանքը՝ տպագրական եւ ֆոտոսարքավորումներ: Ինչպես իրենք են խոստովանում, դա ավելի ծեռնտու է, քան արտադրանքի տպաքանակը օրը 10 միավորով ավելացնելը:

Չնայած ճանաչելիության գործակիցը բարդ եւ նուրբ երեւույթ է եւ դժվար թե որեւէ մասնագետ կարողանա այն ճշգրիտ հաշվարկել, դա չի թուլացնում հովանավորների եռանդը: Ռիչարդ Դենտոնի խոսքերով, *«Լինել «եւրո-92»-ի հովանավոր, նշանակում է պատկանել աշխարհի բարձր խավին»:*

Գարեջրի, ավտոմոբիլների, ածելիների ու մարզական համազգեստների սիրահարները (մոտ 4 մլրդ հնարավոր գնորդներ) դիտում են առաջնության խաղերը: Մի՞թե դրանից ավելի լավ բան կարող են երազել հովանավորները:

ԼԵՎՈՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ
Ըստ «Նյուզուիք»-ի

digitised by A.R.A.R.@

Տոմսակ

Extra-Extra

Անցնող մի քանի օրերին, ավելի ճշգրիտ՝ երկուշաբթի եւ երեքշաբթի գիշեր, Հայաստանում արձանագրվեցին տիեզերական ուժերի, ամեն տեսակ բիոռոկերի, գերբնական երեւույթների արտակարգ կուտակումներ, որոնք ի մի գալով Հայկական հեռուստատեսության Նորքի աշտարակի ամենաձիգ կատարին, նրա մագնիսական հզոր դաշտի կիզակետում, այնտեղից հազար-հազար թելերով ու թելիկներով ներհոսեցին հայաստանցիների բնակարաններից ներս, արտացոլվեցին փոքր էկրաններին ու մտան մարդկանց հոգեղեկից ներս, այսինքն՝ ուղիղ գլխի կենտրոնից, որտեղից հոգին է սովորաբար դուրս գրծնում, երբ մարդու մարմինը մահանում է եւ հոգին դատապարտվում «իր թեւերն առնել»:

Զարմանալի բաներ դատահեցին այդ երկու (թերեւս նաեւ նախորդ ու հաջորդ) գիշերները, իրարահաջորդ սեանս-ծրագրերով: Հավատքի, ջերմեռանդության, հրաշքի, հրաշափառ բուժումների, զորավոր քարերի, բիոռոկեր արձակող նկարների, խաչերի, ժոյացող արեւի ու սառնադեմ լուսնի, երկարաղոզ եզների, Հիսուսի, Հիսուսների, Քրիստոս դաղաանների, Փրկիչների, դատարկ ափսեների, վիուկների, վիուկահալածանքի խրախճանք էր, տոնախմբություն: Զարն ու բարին անողոք ահեղամարտ էին մղում նահրյան հողի վրա եւ ինչ-որ տեղ երկնքում, երկարատեւ թմբիրից արթնացնելով նահրյան անդարտ ոգին, որ շուտով, շատ շուտով, Փրկչի զորությունով դիտի հարություն առնի...

Հայ՝ կաթոլիկոսականներից մեկը (ոչի՞նչ, որ նրա աղոթած «Հայր մեր»ը թվաս էր, գրաբարյան գ-երը՝ զնելիի նման զենող. չէ՞ որ աստված սիրում է անմեղ մանուկների եւ անգրագետ մարդկանց բերանով խոսել երբեմն), persona non grata հռչակեց իր ռուս համքյար Կաթոլիկոսկուն, բուժեց (ճիշտ է, մեծ դժվարությամբ, քանի որ Հայաստանում դեռեւս ավելի ակտիվ են քան Ռուսաստանում) եւ հեռախոսահամարը տալով խոստացավ առավել բուժել հիվանդներին: Նա խոստացավ նաեւ, ամենակարեւորը, առաջիկա օգոստոս ամսին կամ երկրաշարժ եւ կամ առնվազն հրդեհ բերել ադրբեջանցիների գլխին:

Ժողովրդական երգի նախկին մեծ աստղը, դրիմադդոնան, այդ գիշեր վերջապես համաձայնեց հանդես գալ իր երկրպագուների առաջ, սակայն (ինքնազրկումի ի՞նչ տղավորիչ օրինակ) առանց կոմունիկայի, ռոնեցրած մազերի վրայից՝ սպիտակ քողով, եւ... Հիսուսին գտած լինելու ուրախությունից գժված: Այո, գժված: Հրաշիք իմն, նա երգում էր նոր ձայնով, կկլացող նոր ելեւէջներով, ինքնամոռաց, ամենանախ երգեր, խնդրելու դեռ դահանջելով Հիսուսից, որ ընդունի իրեն:

Այգեգործ-քանդակագործը ցույց տվեց իր այգու զորավոր քարը, որ գյուղի բոլոր բնակիչներին է բուժում, բոլորի մուրազներն է ի կատար ածում: Իսկ Ալեքսանդրիայի՞ց թե Բեյրութից եկած հայրենադարձ դառավ տատիկը հորդորեց սիրել ու ներել միայն այն ադրբեջանցիներին, որոնք մեր որդիներին են սպանում:

Բայց իսկական վայելքը, տիեզերական խրախճանքը տեղի ունեցավ չորեքշաբթի գիշեր, երբ ինքնաթեռքար, իրենցից անկախ իրար գլխի հավաքվեցին սղալած թեղերով նկարիչը, նիհար ու ջղուտ գրաբարագետ-գրքացը եւ Ֆիզիկա-մաթեմատիկա-աստղաֆիզիկա-էքստրասենսատիկական գիտությունների թեկնածո՞ւ թե դոկտոր-դրոֆեսորը եւ ամեն ինչից զարմացող, ամեն ինչ գնահատող-ըմբռնող լրագրողուհին: Նկարիչն ստեղծել էր մի տիեզերական կտավ (ոչ իր գերզգայուն թեղերի ծայրով), գերբնական բոլոր ուժերի, սրբերի, բարի հրեշակների, էքստրասենսների մեծագույն վարպետ Նարեկացու եւ անշուշտ Հիսուսի օգնությամբ: Նրա ստեղծած կտավում դատկերված խաչը ավելի ուժեղ բիոռոկեր էր արձակում, քան ինքը Մեծ Խաչյալը: Եւ դա հաստատվում էր Ֆիզիկա-մաթեմատիկա-տիեզերա-բիոռոկիկայի մասնագետի կողմից, անառարկելի ու անհերքելի փաստերով, մինչ գրաբարագետ-գրքացը, ԵՋ բառը մի լավ ստուգաբանելուց հետո, Մեսրոպի ստեղծած տառերի թվային ուժն ու բիոռոկերն էր չափում անընդհատ:

Չէ, տարօրինակ, գերբնական, տիեզերական ուժեր են հավաքվել Հայաստանում: Հավաքվել են Նորքի աշտարակի ամենատար ծայրին, ծգվելով նրա երկնառաք մագնիսի զորությունից:

Մեր բոլոր հարցերը, Արցախյան խնդրից մինչեւ սահմանների դաշտանություն, աղքատությունից մինչեւ ներքաղաքական դայքար, ամեն, ամեն ինչ շուտով վերջ կգտնեն Նորքի աշտարակի կամքով:

Հ. ԱՎԵՏԻՔՅԱՆ

Լուսանկարը՝ Ա.Ամիրյանի

Երեկ կեսօրին «Կիեւ» գաստրոնոմի դիմաց ահա այսպիսի բազմություն էր հավաքվել: Շորս հոգի, լինգերով զինված, քանդում էին ստորգետնյա անցումի դաստերի մարմարե սալիկներն ու բարձում բեռնատարը, բայց տեսնելով, որ մարդիկ են հավաքվում, դարգաղես փախան: Փաստն ինքը հետաքրքիր է եւ մտորումների տեղիք է տալիս, բայց նույնքան հետաքրքիր է նաեւ այն, որ աղմուկի վրա հավաքված միլիցիոներներն այդպես էլ չխառնվեցին՝ «մեր գործը չէ»: ■

Ամերիկյան բժիշկները Հայաստանում կռիվ են մղելու աբորտների դեմ

Հարվարդի համալսարանը օգնում է հայ կանանց

Հուլիսի 20-ին Երեւանի Նիստերի դահլիճում հրավիրված մամուլի ասուլիսը հաճելի լուրի էր նվիրված՝ ուրբաթ օրը, այսինքն վաղը Երեւանի բժշկական կենտրոնում բացվում է Ամերիկյան Հարվարդի համալսարանի կողմից հիմնադրված «Կանանց առողջության կենտրոնը»:

Կենտրոնի հովանավորը մեր հայրենակցուհու բոստոնաբնակ տիկին Նորա Լիոյարիսյանի անձնական ջանքերով ստեղծված «Մոր եւ մանկան առողջության համար» հիմնադրամն է:

Ինչպես նշեց տիկին Լիոյարիսյանը, մեկ տարի առաջ գալով Հայաստան, Համբարձում Գալստյանի հետ զրույցի ժամանակ իմացել է հայ կանանց վերարտադրողական ֆունկցիաների հետ կապված դժվարությունների մասին: Քաղաքագլխի խնդրանքին արձագանքելու համար էլ նա մտահղացել է երեւանի հիվանդանոցներից մեկում «Կենտրոնի» բացման գաղափարը, որն այսօր իրականություն է դառնում:

Ասուլիսում ներկա գտնվող ամերիկյան բժիշկներ Քենջամին Սախը, Ջոզեֆ Մորքոլան եւ հմայիչ տիկին Ռենե Գոլդբերգը նշեցին, որ թեեւ խորհրդային համակարգում ձեւավորված հայ բժիշկները լավ արդյունքների են հասել կանանց ամլության եւ պտղաբերության օրգանների այլ բարդ հիվանդությունների բուժման բնագավառում, բայց մեր օրերում ամբողջ աշխարհում առաջնահերթ է դառնում այդ հիվանդությունների կանխարգելումը, եւ հենց այդ նպատակն է իր առջեւ դնում Երեւանի հիվանդանոցում բացված կենտրոնը:

Այդ հայեցակետից ավելի են կարեւորվում ընտանիքի պլանավորման խնդիրները եւ դրա հետ կապված հակաբեղմնավորիչ միջոցներից ճիշտ օգտվելու կարողությունը: Հիմնադրամն իր վրա է վերցրել 100 տոկոսանոց երաշխիք տվող համապատասխան դեղահաբերի մատակարարումը: Մեծ աշխատանք է նախատեսվում նաեւ կանանց շրջանում սեռական կյանքին, հղիությանը վերաբերվող գիտելիքների տրամադրման համար:

Եւ եթե կենտրոնի շնորհիվ մեր կանայք գան այն գիտակցության, որ հանուն իրենց առողջության նրանք տարին գոնե մեկ-երկու անգամ, անկախ նրանից, իրենց կար են զգում, թե ոչ, այցելեն բուժկետեր, ապա բժիշկներն իրենց առջեւ դրված խնդիրը ամբողջապես կատարած կլինեն:

Ավելացնենք նաեւ, որ Հարվարդի համալսարանը մտադիր է Հայաստանում բացված-կենտրոնը բազա դարձնել նախկին Խ. Միության հանրապետություններում համանման աշխատանքների կազմակերպման համար:

Իսկ նրանք, ովքեր հետաքրքրվում են իրենց առողջական վիճակով եւ ցանկանում են որակյալ ստուգման անցնել, նախնական տեղեկություններ ստանալու համար կարող են զանգահարել 47-22-77 հեռախոսահամարով: Ճիշտ է, ծառայությունը վճարովի է՝ 100-300 ռուբլի, բայց առողջությունը շատ ավելին արժե: ■

Բ. Ելցինը կոչ է անում արագորեն ստեղծել ԱՊՀ-ի խաղաղարար ուժեր

Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինը Կրեմլում երեքշաբթի օրը ստորագրեց զինվորական դիտորդների կազմավորման եւ գործունեության ժամանակավոր կարգի մասին արձանագրություն: Դրանք դեսք է նպաստեն խաղաղությանը ԱՊՀ երկրների միջեւ եւ ներսում ծագած կոնֆլիկտներում: Արձանագրությունը ներկայացրած ԱՊՀ երկրների ղեկավարների եւ կառավարությունների խորհուրդների աշխատանքային խմբի համակարգող Իվան Կորոչենյայի հետ հանդիպման ժամանակ Ելցինը հայտնեց, թե այդ միասաթրդի իրագործումը դրական կազդի ԱՊՀ-ի կոլեկտիվ անվտանգության ամրապնդմանը: Ելցինը կոչ արեց կոլեկտիվ անվտանգության մասնակից երկրների (Հայաստան, Ղազախստան, Ղրղզստան, Ռուսաստան, Տաջիկստան, Ուզբեկստան) ղեկավարներին որքան հնարավոր է արագ ստորագրել այդ արձանագրությունը եւ ձեռնամուխ լինել խաղաղարար ուժերի ստեղծմանը: ■

Պահակային նավը Ուկրաինայի դրոշն է բարձրացնում

Ըստ Ուկրաինայի ռազմածովային ուժերի կազմկոմիտեի ներկայացուցիչ Նիկոլայ Սավչենկոյի, երեքշաբթի առավոտյան Սեւծովյան նավատորմի դահակային նավերից մեկը Սեւգեյ Նոստենկոյի հրամանատարությամբ առանց թույլտվության դուրս է եկել Ղրիմյան ռազմածովային բազայի Դոնուզլավ նավահանգստից եւ շարժվել դեպի Օդեսա: Նավի վրա բարձրացվել է Ուկրաինայի դրոշը: Նրա անձնակազմը դեռեւս հունվարին հավատարմության երդում էր տվել Ուկրաինային:

Նավաստիները, ըստ Սավչենկոյի, իրենց գործողությունները բացատրում են նրանով, որ անհնար էր շարունակել ծառայությունը հրամանատարության ճնշումների եւ հալածանքների հետեւանքով: Նա հայտնել է նաեւ, որ դահակային նավի հետեւից ուղարկվել են մոտորանավակներ, ինչպես նաեւ երկու դահակային նավ: Նրանցից մեկին առաջադրված է եղել զինված խումբ իջեցնել եւ կանգնեցնել հետապնդվող նավը: Ըստ Ուկրաինայի դաշտանության նախարարության մամուլի կենտրոնի, Օդեսայից նրան ընդառաջ են դուրս եկել երեք սահմանային մոտորանավակ: Ուկրաինական կողմը խնդրանքով դիմել է Սեւծովյան նավատորմի հրամանատարությանը՝ զերծ մնալ գործողություններից եւ հնարավորություն տալ նավին հասնել Օդեսա՝ իրադրությունը դարգելու համար: Սեւծովյան նավատորմի մամուլի կենտրոնում դահակային նավի հեռանալը հաստատվել է:

Միաժամանակ Ուկրաինայի ռազմածովային ուժերի հրամանատար Բորիս Կոժինը հայտարարել է, թե ինքը դեմ է նման գործողություններին, որոնք աղակայունացնում են իրավիճակը սեւծովյան նավատորմում:

Ուկրաինայի ռազմածովային ուժերի եւ Սեւծովյան նավատորմի հրամանատարության ներկայացուցիչները մեկնել են Օդեսա: ■

Հայաստանի ազգային օպերայի եւ բալետի ակադեմիական թատրոն

Օհան Դուրյան

Ծննդյան 70-ամյակի առթիվ

23 հուլիս 1992 թ.
Համերգ

Ծրագրում՝

Շուբերտ՝ «Սիմֆոնիա թիվ 9».
Վագներ՝ Նախերգանք եւ Իզոլդայի վերերգը «Տրիստան եւ Իզոլդա» օպերայից.
Օհան Դուրյան՝ Կոմիտասիանա (առաջին կատարում)
Արմեն Նասիբյան՝ Լեռնային Դարաբաղի հիմնը (արցախի տարբերակ):

Կատարում են՝ **Հայաստանի հեռուստատեսության եւ ռադիոյի սիմֆոնիկ նվագախումբը**

Հովանավոր՝ «Գառնի» առեւտրատարտադրական միավորում

Մենակատար **Արաֆ Մանսուրյան:**

Համերգը հովանավորում է «Ալմազ» արտադրական միավորումը եւ «Մյուդ» իրավական կոնցեռնը:

Դիրիժոր՝ ՕՀԱՆ ԴՈՒՐՅԱՆ

Սկիզբը՝ ժամը 19.00-ին, տոմսերը վաճառվում

Վաճառվում է

երեք սենյականոց բնակարան Կոմիտասի եւ Ազատության խաչմերուկի մոտ: Հեռախոս՝ 22.34.40:

Լուրերի Դոսյե

«Լրտես» է հայտնվել Բաքվում

Հուլիսի 21-ին Բաքվում, Ազգային անվտանգության նախարարությունում տեղի ունեցավ մամուլի ասուլիս, որտեղ ներկայացվեց իբր «հայկական հատուկ ծառայությունների գործակալ» Նիկոլայ Վոլկովը: Նա հավաստիացրեց, թե Հայաստանի հատուկ ծառայությունները Ադրբեջանում կազմավորում են «5-րդ շարասյուն», որի նպատակն է Ադրբեջանում սադրել միջկրոնական եւ ազգամիջյան բախումներ: Նրան խոսքերով դա արվում է «Ադրբեջանը ներսից քայքայելու համար»: Ն. Վոլկովը հայտնեց, թե ինքը առաջադրանք է ստացել Ադրբեջանում տարածել հակալեզգիական, հակահրդեհյան եւ հակառուսական բովանդակությամբ թռուցիկներ: ■

151,1 ռուբլի 1 դոլլարի դիմաց

Մոսկովյան միջբանկային վալյուտային բորսայում երեքշաբթի օրը դոլլարի գինը եղել է 151,1 ռուբլի մեկ դոլլարի դիմաց: Վաճառվել է 40 մլն 560 հազար դոլլար: Անցած շաբաթ, հուլիսի 16-ին մեկ դոլլարն արժեր 135,4 ռուբլի, վաճառվել էր 27 մլն 730 հազար դոլլար: ■

Կանայք եւ սիդը

Երկուշաբթի Ամստերդամում բացվեց սիդ հիվանդությանը նվիրված մեծագույն խորհրդաժողովը, ՍԱԿ-ի Համաշխարհային առողջապահական կազմակերպության նախաձեռնությամբ: Մասնագետների կողմից բերված վիճակագրական տվյալները ցնցող են իսկապես. առաջիկա 6 ամիսների ընթացքում աշխարհում սիդով վարակվածների թիվը կավելանա 1 միլիոնով, 15 վայրկյանում 1 հիվանդ հարաբերությամբ:

Սեռական հարաբերության եւ արյան փոխներարկման միջոցով տարածվող այդ հիվանդությունը հատկապես Աֆրիկայում համաճարակային բնույթ է ստացել: Միայն Ս. Նահանգներում մինչեւ 1995 թ. սիդով վարակվածների թիվը 240-335 հազար կլինի: Մասնագետների կարծիքով, կանայք ավելի հակամետ են այդ հիվանդությանը, քան տղամարդիկ:

Առորդիների ուխտ

Վարդավառ

Աստղիկն է Աստվածային
Մերը Հայոց,
եւ Վարդավառն է Աստվածային
Սիրո Տոնահանդեսը:

Աստվածային Սիրո ծիսակատարությունը եւ Տոնահանդեսը՝ Վարդավառը, տեղի կունենա հուլիսի 26-ին, ժամը 12-ին Գառնի Մայր Տաճարում:

Արի Հայերը հրավիրվում են մասնակցելու ավանդական Վարդավառին եւ իրենց մեջ նորոգելու Աստվածային Սիրո զգացողությունը:

Առորդիների ուխտի գերագույն մեհենական խորհուրդ

Գառնիի մշակույթի տուն

Լուրերը՝ interfax-ի, «Մնարի» եւ մեր թղթակիցների

Ազգ

Հիմնադիր եւ հրատարակիչ «Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ

Խմբագիր
ՀԱՍԼԵՏ ԳԱՍՊԱՐԵԱՆ

Տնօրէն ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ

52.16.35 գլխ. խմբ.
58.18.41 խմբագիր
56.28.63 տնօրէն

Apple® Macintosh® համակարգչային շարուածքը Ռ.Ա.Կ. ժամլոյ եւ տեղեկատուութեան կենտրոնի

Azg Bi-daily, 47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 375010

Editor H. AVEDIKIAN

ՀՀ նախարարների խորհրդին առընթեր «Պարբերական» հրատ. տպարան, Երեւան-23, Արշակունեաց 2

Գրանցման թիւ 65 Դասիչ 69149
Տպաքանակ 20 000 Պատուէր 1516
Ստորագրուած է տպագրութեան 22.07.1992

digitised by A.R.A.R.@